

ԴՈՑԵՆՏ Բ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆ

Ա Զ Գ Ի
Ա.ՌԶԵՎԻ ՀԱՏՎԱԾԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ Ա Յ Թ Ե Տ Հ Հ Ա Յ Տ

Յ Ե Բ Ե Վ Ա Կ

1940

ԴԱՅԵՆՏ Բ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆ

(Յեւելի Ակադեմիական Կոմիտեյի յեզ թ. ինսիստուտի
ակադեմ. ամբ. վարիչ)

Ա 17.7 - 002.291

Մ-45

Ապրիլ 1961

Ա. Զ Գ Ի
ԱՌՁԵՎԻ ՀԱՏՎԱԾԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Զենքարկ տրախումայի դեմ պայքարողների համար)

3441



Յ Ե Բ Ե Վ Ա Յ Ն

1940

A 1
2516

Доцент Б. МЕЛИК-МУСЯН
Заболевания переднего сектора глаза
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս աշխատությունը նախառեսված է տրախումայի դեմ պայքարող բժշկական միջին պերսոնալի համար . նա կազմված է համաձայն այն ծրագրի , վարը հավանություն է զտել Առժաղկոմատի կողմէց Ակնարուժական կլինիկային կից տրախոմայի դեմ պայքարելու նորառակով կազմակերպված կուրսերի համար :

Մանրամասնորեն կանգ առնելով տրախոմայի վրա և յերներով դործադրողների կրթական մակարդակից , այսուղ համառոտ ավագ՝ և նաև աչքի անառողիան , ֆիզիոլոգիան և այն հիվանդությունների նկարագրին ու բուժումը , վօրոնց հաճախակի կհանդիսի տրախոմայի դեմ պայքարողն առորյա աշխատանքների մնաթացքում , տրախոմային դուղորդված , կամ անկայանբանից և պարտավոր կլինի այդ դեպքերում բուժողնություն հասցնելու : Աշխատության մեջ աված ՝ արտաձևշման յեղանակը , ընդունված դեղորայքի դեպատմերը :

Գիրքը հավակնություն չունի ակնարութության ձեռնարկ անվանվելու , նա ընդպրկում է թեթեվակի տկնաղնդի առջեղի հատվածի հիվանդությունները :

Նա պետք է ծառայի տրախոմայի դեմ պայքարողի
հոմար վորպիս ուղեցույց զյուզում մենակ աշխատե-
լու ժամանակ . սակայն նա լին ընդգրկում է ակնա-
բուժության այն ծրագիրը, վորը դասավանդվում և
ըույրական կուրսերում , բուժ . տեխնիկումներում :
Չունենալով ակնաբուժության մասին հայերեն լեզ-
վով համագոտասխան ուղեցույց, այս աշխատությու-
նը բավարարած կլինի նրանց թե դասավանդման ըն-
թացքում և թե միջին պերսոնալին՝ դորձնական տա-
պարեղում :

Աշխատության հիմք են ծառայել պրոֆ . Բել-
յարմինով — Մերցի , պրոֆ . Ֆուկսի , պրոֆ . Ակոն-
ֆելդի ձեռնարկները , մանկավարժական խմասով
պրոֆ . Կրյուկով — Ռունցովի և պրոֆ . Մուլդինի աշ-
խատությունները և դորձնականում՝ տարիների իմ
անձնական փորձը :

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

ՏԵՍԱԴԱԿԱՆ ՈՐԳԱՆԻ ԱՆԱՏՈՄԻԿ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԾԱԾ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աչքը յուր ոժանդակ մասերով՝ կողերով, կոհյունկտիվայով, աբտափային տողաբառով և միաններով միասին կազմում և տեսողական որդանը:


Աչքերը գետեղված են ճակատուկը տակ, դանդիպաշինի մասի յերկու խոռոչներում՝ որբիտայում, կամ ուրիշ խոռոչով ակնակապիճում: Ակնակապիճը նման է չորս-կողմանի պիլամիդի, վորի դադաթը ուղղված է գեղի ներս իսկ հիմքը՝ դուրս և առաջ:

Որբիտայի խորքում կա յերեք անցք. նրանքց մեկը ըրջանաձև և, նրա միջով անցնում են տեսուներվը և աչքը սնող զարկերակը. մյուս յերկու անցքերը ճեղքվածքածել են. մեկն ուղղված է գեղի դուրս և վեր, իսկ մյուսը՝ դեպի դուրս և վար:

Նրանց միջով անցնում են աչքի մկանները, կոպերի ներվերը և աչքից արյունը դուրս անող յերակները:

Ակնակապիճը պատած է վերվոսկրային շերտով (պերիոստ), իսկ սրա վրա գտնվում է ճարապային բըշ-ջանքի մի հարուստ շերտ, վորի միջով անցնում են հիշտ ներվերն ու անոթները:

Ճարսլային բջջանքը փափուկ պատվանդան և
հանգիսանում նրա վրա նստած տկնաղնդի համար,
բաժանված առաջինից տենոնյան նուրբ ֆասցիայով:
Հոնիք. — Ակնակաղիճի վերին սահմանում զետեղ-



Աչքի սխեմատիկ կարգածքը.

1. Ակնակաղիճի գոսկըները.
2. Յեղչերեսի.
3. Կործրենի.
4. Առջի համած.
5. Ծիածան.
6. Ցիստը մարմին.
7. Վասպնյակ.
8. Աղակենման մարմին.
9. Անոթենի.
10. Ցուցենի.
11. Տեսաղոկան ների.

մած և հոնքը, նու բնական մի պատճեց և, վորպեսպի
քրտինքը ճակատից դեպի աչքը չհոսի:

Կոպերը .— Կոպերն աչքի սժանզակ մասն են. ընդ-
ուող իրար մոռենալով ու ծածկելով, նրանք պաշտ-
ուանում են աչքն արտաքին պատահարներից, նպաս-
տում են աչքի առջեվի մասի համահավասար թար-
մացման, ջերմաստիճանի պահպանման և իրենց շար-
ժումներով սժանզակում են կոնյունկտիվալ պարկն
բնկած մարմինների հեռացմանը:

Վերելի և ներգեվի կոպերը դրսի մասում միա-
նում են իրար կազմելով ոսւր անկյուն: Ներսի մա-
սում կոպերն աղեղնաձեվ միացումով կազմում են,
այսպէս կոչված, արտասվալճակը, վորի մեջ զետեղ-
ված և արտասվամսիկը. մոխիեց դեպի դուրս գտնը-
վում և կիսալուսնաձեվ մի ծալք: Արտասվալճակից
դեպի վար և զեպի վեր կոպերի ներսի յեզրերում
դանվում են արտասվապտկիկները. որտեղ զավաթից
կետաձեվ բացվում են արտասվախողովակիկները:

ԿՈՊԻ ԿԱԶՄԱԿԹՅՈՒՆԸ ԴՐՍԻՑ ԴԵՊԻ ՆԵՐԸ

1) Մաշկ, վարը չափազանց նուրբ և և ծածկ-
ված բարակ ու աննկատելի մաղիկներով. կոպերի վրա
կլատելի յեն հորիզոնական ծալքեր, վորոնք մասսամբ
միայն ահճետանում են աչքը խփելիս. կոպի մաշկը
դուրկ և յենթամաշկային ճարպային չերտից:

2) Մկան .— Անմիջապես մաշկի տակը գտնվում և
ըրջանաձեվ մկանը, կամ այսպէս կոչված կոպի սեղ-
միչը: Այս մկանը բաղկացած է կոպային և ակնակա-

ողիճային մասերից : Անմիջապես շրջանաձև մկանի տակը զանվող կոճիկի վերին յեղքէց սկսվում է վերին հաղթ բարձրացնող մկանը : Մաշկամկանային շերտին հետեվում է կողի ներսի շերտը՝ կազմված կոճիկից և շաղկապենուց (կոնյունկտիվայից) :

Կռնիկն ունի մոտ 20 մ/մ . յերկարություն . վերելի կողի վրա նրա լայնությունն է 10 մ/մ , ներքեզի՝ 5 մ/մ . աչքի դրսի և ներսի անկյուններում կողի կոճիկներն իրար հետ միանում են կազերով , վորոնք ամբանում են որրիտայի վոսկրային յեղքին :

Կոճիկի մեջ զետեղված են Մելոտյան ճարպագեղձերը , վորոնք յերկարավուն են և դասավորված են իրար զուգահեռ , վերին կոճիկի վրա նրանց թիվը տասնում է մոտ 30-ի , խոկ ցածինի վրա՝ ավելի քիչ : Նրանց արտադրած ճարպանյութով ոծվում ե կողի յեղքը և նորաստում է արցունքի՝ կոնյունկտիվալ պարկից դեղի դուրս չթափվելուն և կողերի յեղքի չքերծվելուն : Կողի յեղքին դրսից նշմարվում է թեթեվ կլորավուն դրսի կողը , խոկ ներսից ներսի կողը , վորն ավելի սուր է . նրանց միջին տարածությունը կոչվում է միջկողային տարածություն . առջեցի կողի վրա դասավորված են 2 շարք արտելանունքներ . ներսի կողի մոտ , միջկողային տարածության վրա բացվում են Մելոտյան դեղձերի ծոլանները :

Շաղկապենի .— (կոնյունկտիվ) : Կողի ներսը պատաժ և շաղկապենով կոնյունկտիվայով : Շաղկապենին սկսվում է կողի յեղքերից , պատառմ և նրա ներսի ամբողջ մակերեսը , հասնում է ակնապնդին և տարած-


վելով նրա վրա վերջանում և յեղջերենու յեղբին՝
լիմբի մոտ :

Կոնյունկտիվան բաժանվում է 3 մասի՝ կոճիկա-
մին, անցածալքային և ակնաղնդային. առաջին յեր-
կուսն իրար չարունակություն են հանդիսանում կոպի
վրա, իսկ յերբորդը՝ յերկրորդի չարունակությունը
կարծրենու վրա։ Սկսած կոպի յեղբի ներսի կողեց
մինչև կոճիկի վերջը, կոնյունկտիվան ամուր կպած
և կոճիկին, իսկ անցածալքում և ակնաղնդի վրա նա
շարժուն է :

Շաղկապենին նուրբ և թափանցիկ թաղանթ և
նրան հաստության կտրվածքի վրա միկրոսկոպի տակ
սկսակելի յեն դրսի խիտ և ամբակաղմ եսլիթելը ո
ներսի նոսր ու թույլ հյուսվածքը. ներսի հյուսված-
քում զետեղված են բաղմաթիլ լիմֆատիկ բջիջներ և
կօնյունտիվայի արյունատար անոթներ. այս շերտն
տնիտնիում և աղենոյիդ հյուսվածք։ Շաղկապենու-
մաբողջ մակերեսը հաղթե, բացի կոճիկի վերին յեղ-
բի մոտ դանվող բաժնից, ուր նու ոպատած և պոկիկե-
ների ցցվածքներով, վորոնց արանքների խորքից
դուրս և դաշիս լորձը։

Արտասվային գործարաններ. — Արտասվային գոր-
ծարանները բաղկացած են արտասվագեղձերից և ար-
տասվատար ուղիներից։ Արտասվագեղձերը դանվում
են որբիտայի վերին դրսային անկյունում։ Նրանք
կտղմված են յերկու մասից՝ վերին, կամ որբիտաւ,
ներքին կամ կոպային մաս։ արտասվագեղձերի ծո-
բանները բացվում են կօնյունկտիվայի վերին դրսի
մասի վրա. ծորաններով արցունքը հավաքվում և

կանյունկախվալ պարկը, վոզոզում ակնաղնդի առջեցի հատվածը և լցում արտասվալճակը: Այսաեղից արտասվապակիկների միջոցով մանում և արտասվապար ուղիների՝ արտասվախոզովակիկների ժեղ: Ակո-



Արտասվային սրբաններ

1. Արտասվագեղձի ակնակապիճային մասը
2. Նրա ծորանները
3. Արտասվագեղձի կողային մասը
4. Աչքի կտրվածքը
5. Վերին կող
6. 7 Արտասվակետեր,
8. Վերին արտասվաասվակիկ
9. Ներքին արտասվաավակիկ
10. Արտասվաավակիկների միացման վայրը
11. Արտասվապարկ
12. Քթարտասվային կանալ

վելով արտասվակետերից, արտասվախոզովակիկները սկզբում ուղղաձիգ են, իսկ հետո ընդունում են հորիզոնական ուղղություն ու միանալով բացվում են աչքի ներսի անկյան մուա՝ արտասվափոսիկի ժեղ:

դանվող արտասվասրարկում : Այսասավագարկի վերին
մասը փակ է, խակ ներքեց նա բացվում է դեպի ար-
տասվային կահալը, վորր վերջանում է քթի ներքեվի
խեցու տակ : Վոզովելով ու թարմացնելով աչքի առ-
ջելի հատվածը, արցունքը միաժամանակ մեքենայո-
րեն հեռացնում է նաև աչքի վրա հանդիպող ոտար
մարմինները և հիշած ուղիներով անցնում քթի խո-
ռաչը :

Ա Զ Ք Բ

Աչքը կազմված է յերեք քաղաքիներից և քա-
փանցիկ պարունակությունից :

Դրսի թաղանթի 5/6-ը կազմում է սպիտակուցա-
յին թաղանթը (ոկլերան), կարծրենին, խակ մնացածը՝
յեղջերենին :

Կարծրենին ամուր շարակցական հյուսվածք է,
սպիտակ, անթափանցիկ, հետեղի մասում սկլերան
վերջանում է կլոր մաղանման անցքով, վորտեղից
դուրս և դոլիս տէսաներքի թելիկների փունջը. առ-
ջեվում ոկլերան առարկանարար փոխվում է յեղջե-
րենու : Այսաեւ նա կիսաթափանցիկ է և կոչվում է
լիմբ : Լիմբին սահմանակցող կարծրենու ներսի շեր-
տով անցնում է Շլեմյան կանալը, մի ուղի, վորով
ներակնային հեղուկը դուրս է զնում աչքից ու ընդ-
դրկմում արյան լիղ հանուր շրջանառության մեջ :

Յեղջերենին .— Լիմբից դեպի առաջ կազմում է
յեղջերենին՝ արտաքին թաղանթի 1/6-ը. նա թափան-
ցիկ է, անանոթ, շրջանաձել, համեմատած կարծրե-

նու չըջանի հետ, վոքր ինչ զուրս ցցված, վայլուն
մակերևոսով, չափաղանց զբայուն։ Նրա միջով լույսի
ճառագայթները թափանցում են աչքի հատակը. նա
անվում ե ի հաշիվ իրեն շըջապատող անոթների։

Յեղջերենու հաստության կորվածքի վրա միկ-
րոսկոպի տակ նկատելի յին հինգ չերտեր. ամենավե-
րին դրսի չերտը կոչվում է եպիթել. ամենավերջին
ներսի չերտը — ենդոթել. եպիթելի անմիջապես տակը
Բառեմնյան չերտ. որտ տակ յեղջերենու բուն հյուս-
վածք՝ ամենալայն չերտը, իսկ նրա տակը՝ չորրորդ
չերտը, վորը կոչվում է Դեսցեմետյան չերտը—նստած
ենդոթելի վրա ներսից։

Անորային տրակտը. — Անմիջապես կարծրենու տա-
կը գտնվում է աչքի 2-րդ թաղանթը՝ անոթային
տրակտը։ Սա բաղկացած է յերեք մասից. առջեկի մա-
սը կոչվում է ծիածան, միջին մասը ցիլիար մարմին
(արտելանային մարմին), հետեւի մասը՝ անոթաթա-
ղանթ։

Ծիածան. — Ծիածանն անոթային տրակտի առջե-
կի մասն է. նու այն դունավոր և նուրբ թաղանթն է.
Վորը ոլարդ նկատելի յէ թաղանցիկ յեղջերենու ան-
միջապես տակը։ Ծիածանի և յեղջերենու միջի տա-
րածությունը կոչվում է առաջնային կամերա. ծիա-
ծանի կենտրոնում կա մի անցք. ուա բիւն է։ Ծիա-
ծանը լինում է տարբեր դույնի՝ դորշ շաղանակա-
զույն, կաղապույն, յերկնազույն, սեղ և այլն.
Դույները կախված են ծիածանի մեջ պարունակվող
պիզմենտի քանակից. վորքան քիչ և պիզմենտը, այն-
քան բաց է ծիածանի դույնը և՝ ընդհակառակը։ Ծի-
քան բաց

ածանը պարզւնակում ե բազմաթիվ անոթներ և յերկու մկան. մկաններից մեկը բիբի սեղմիչն է, մյուսը լայնացնողը. ուշաղիք նայելիս ծիածանի մակերեվույթի վրա նկատելի յե. խորդուբությունները կաղմված են փոսիկներից, վորոնք կոչվում են կրիպտա, և նրանց իրարից անջառող պատերից՝ տրաբեկուլ:

Ցիլիար կամ արտեվանային մարմին. — Ծիածանը յուր արմատում փոխարկվում է անոթային տրակտի 2-րդ մասին՝ ցիլիար մարմնին. ծիածանի միացման տեղում ցիլիար մարմնը հաստ է, իսկ գնալով դեղի հետեւ՝ բարակում է: Արտեվանային մարմնի ներսի մակերեսն ունի ցցվածքներ. այս ցցվածքները պսակածել շրջապատում են անմիջապես ծիածանի տակը, բիբի սահմաններում դետեղված վրապնյակին, վորի պարկից թերանման կապերը գալիս միանում են ցիլիար մարմնին: Ցիլիար մարմնի մեջ դետեղված է ցիլիար մկանը. նրա կծկումներից ու թուլանալուց թուլանում կամ ընդհակառակը ձգվում է վոստիյակի պարկը, վորից և կախված ե տուածգական վոստիյակի ձեվափոխումը և հարմարվելը տեսնելու հեռու կամ մոտ առարկան:

Անոթայինք. — Անոթային տրակտի վերջին մասը կոչվում է անոթաթաղանթ. առջեվում ցիլիար մարմնը աննկատելի փոխարկվում է անոթաթաղանթի. հետեւ անոթաթաղանթը անոթաթաղանթը մարմնը անցքի շուրջը: Անոթաթաղանթը չափաղանց հարուստ է անոթներով: Դրսից գեղի ներս անոթաթաղանթը կաղմված է՝ անմիջապես կարծրե-

նու տակը դանվող իրար հետելից զետեղված զանազան մեծության անոթների չերտերից՝ մեծ, միջակ և մաղանման անոթների չերտեր և վերջապես ամենից տակի մասն և կաղմում նույնողես մի բարակ միտապաղադ չերտ, վորն անոթենին բաժանում և նրա տակը դռնվող ցանցենուց :

Յեթե աչքից պկուչարար հեռացվի կարծրենին, կրացվի անոթային տրակտը. նու չափազանց նման և սեվ խաղողի կճեսլի պոկած պարտին, շնորհիվ նրա վրա գտնվող բաղմաթիվ անոթների ու ներվերի. այս իւմտառով և հնում թե հունական և թե արարական բժիշկները նրան անվանել են հունարեն՝ ուվեա, արարեն՝ ինար, այսինքն խաղողի հատիկ. այստեղից և այդ թաղանթն ուրիշի խոսքով կոչվում է ուվեալ տրակտ :

Ուվեալ արակտի չափազանց հարուցու անոթները անում են աչքի հյուսվածքները և նրա պարունակությունը. խել նրա մեջ դանվող խիտ պիտմենաների շնորհիվ սոեղծվում է անթափանցիկ մի պատճեց վորն այն կարելոր նշանակությունն ունի, վոր չի թույլատրում լույսի ճառապայմները բացի բիրից այլ ճանապարհով ներս թափանցեն աչքը և այլպիսով հնարավորություն և սոեղծում պարզ տեսողության համար :

Ցանցենին .— Տեսպական որդանի ամենայական մասն և կաղմում, նու բաղկացած և յերեք մասից . 1) տեսաներվի պտղիկից մինչեւ ցիլինդր մարմինը՝ այսինքն ցանցենու յերկու յերրորդը կաղմում և նրա

տեսողական մասը. ցիլիար մասմնի մոտ այս մասը վերջանում է առամբնածել յեզրով, վորը կոչվում է որա սերբատա. 2) որա սերբատայից սկսվում է ցանցենու 2-րդ մասը, վորը պատում է ցիլիար մաքմնի տակը և կոչվում է ցանցենու ցիլիար կամ արտելիանային մաս, 3) տարածվելով ծխածանի տակը, ցանցենին կազմում է ծխածանաթաղանթային մասը:

Յանցենին միայն յերկու տեղում է միացած անոթային տրակալին. ա) տեսաների մուտքի մոտ և բ) որա սերբատայում. մնացած մասերում նա նստած և անոթային տրակալի վրա և պահպանվում է յուր գիրքում շնորհիվ ապակենման մարմնի, վորն աչքի պարունակության մեծ մասն է կազմում: Անգեն աչքով նայելիս ցանցենին չափաղանց նուրբ, բարակ թափանցիկ միւ թաղանթ է. միկրոսկոպային քննությունից պարզվում է, վոր նա բաղկացած է տասը տաքրեր կազմություն ունեցող շերտերից, զանաղանաձև ներվային բջիջներից: Յանցենու յերրորդ շերտը կազմում էն ցուպիկներն ու գալաթիկները. նրանք իրենց մեջ պարունակում են տեսողական ծիրանին, վորի ներկայությամբ ու մնացած 8 շերտերի համապործակցությամբ լույսի ճառաղայթներից ստացված գրգիռը տեսաների միջոցով հաղորդվում է կենարոնական ներվային համակարգությանը՝ ուղեղին, ուր և կազմվում է առարկայի մտադատկերը:

Այսպիսով ցանցենին տեսողական որդանի այն կորեկտադույն մասն է, առանց վորի չի կարող կապարվել տեսներու ակաը:

ՏԵՍԱՆԵՐՎՀԻ ՊՏԿԻԿԲ, ՏԵՍԱՆԵՐՎՀԸ ՅԵՎ,
ԴԵՂԻՆ ԲԻՇԸ

Յանցենու վրա հատկապես նշանակալից են 2 կետեր՝ տեսաներվի պտկիկը և զեղին բիծը. ցանցենու ներվային բջիջների թելիկներն ամեն կողմից ուղղվելով աչքի հետեւի մասը, կաղմում են տեսաներվի պտկիկը. այսուեղ ամրողջացած տեսաներվն ուղղվում է ակնակառիձի գաղաթում դանվող անցքին, վորի միջով անցնելով մասում է գանգի խոռոչն ու խաչաձեվում մյուս աչքից յեկող տեսաներվի հետ։ Առաջ զնալով ուղեղում տեսաներվի թելիկները հանդիսավում են ներվային բջիջների և սրանց միջոցով զրոյիս հացնում ուղեղի կեղեւին, ուր և կաղմում է տռարկոցի մտապատկերը։



Դեղին բիծ. — Տեսաներվի պտկիկից դեպի գուրս, զեղին քունքը դանվում է զեղին բիծը. նա շրջանաձեվ է, ավելի ինտենսիվ զույնի, քան ամբողջ ցանցենին. Արտ մեջ դանվում է կենտրոնական փոսիկը։ Յանցենու վրա տեսողության ընդունակության ամենաուժեղ կետն է զեղին բիծը. սրա կարողությամբ և չափվում տեսողության սրությունը։

Աչքի պարունակությունը. — Աչքի պարունակությունը բաղկացած է՝ ջրային հեղուկից, վտառնյակից և ուղակենման մարմնից։ Ջրային հեղուկը գտնվում է աչքի առջեվի և հետեւի կամերաներում։ Առջեվի կամերան կաղմված է՝ առջեկից յեղջերենուց, հետեւից ծիածանից և վտառնյակի բիբային մասից։ Հե-

անվի կամերայի ստհմաններն են առջելից ծխածանը
յուր հետեւի պատով և վոսպնյակի վոչ բիբային
ժամը։ Աչքի հատվածի վրա առջելի կամերան կիսա-
շունածել է, մեծ, խոկ հետեւի կամերան՝ յեռան-
կյունածել և փոքր։ Յերկու կամերաներն իրար հետ
իրաց են պահպանում այն մասով, վորտեղ ծխածանը

նստած և վոսպնյակի վրա։
Այս յերկու կամերաները
լցված են ջրիկ անգույն
թափանցիկ ջրային հեղու-
կով։

Ա Հ Ֆ Ի Ա Ռ Ջ Լ Ի
Կ Ա Մ Վ Ա Ծ Բ



- Եռյունկարիվալ պարկի կարգածք
 1. Վերին կողի կոճկիկի կոնյունկ-
տիվան.
 2. Վերին անցուծալը
 3. Ակնանդի կոնյունկտիվան.
 4. Յեղիներենու մակերեսը
 5. Ինտենդի կոնյունկտիվան.
 6. Ն բբին անցածալը.
 7. Ներբին կողի կոճկիկի կոնյու-
նկտիվան.

1. Հոնը.
 2. Մաշկի ծալը.
 3. Վերին արտասակետ.
 4. Ներին արտասակետ.
 5. Կազերի զըսի մացածան
վալը.
 6. Կապերի ներսի միաց-
ման վալը.
 7. Արտասակմանիկ
 8. Կիալուսնածեն ծալը.
 9. Մաշկի ծալը.

Վոսպնյակի .— Վոսպնյակը վոսպի շափ և , յերկու-
սուցիկ , առածղական , թեթեվ գեղնաղույն և թա-
փանցիկ . նրա առջելիի մակերեվույթն ավելի ուսուց-
կեն և , քան հետեւինը : Վոսպնյակը պարփակված և
հուրբ և թափանցիկ ուարկում , վորը կապերով միո-
ցած և ցիլիար մարմնին :

Ապակենման մարմին .— Աչքի ներսի մնացած տո-
րածությունը լցված և ապակենման մարմնով . նա
թափանցիկ և սփայլուն , յուր տեսքով չափազանց նման
հում ձվի սպիտակուցին և ընդունակ և ճառա-
դպյթներն ուժեղ բեկելուն , թափանցիկ մարմիններից
ամենից մեծն և . ապակենման մարմինը յուր առջելիի
մասում մի փոսիկ ունի , վորի մեջ դետեղված և
վոսպնյակի հետեւիի մակերեսը :

Աչքի մկանները .— Աչքը Յ մկան ունի . չորսն ու-
ղիղ , յերկուսը թեք : Չորս ուղիղ մկանները դետեղված
են աչքի չորս կողմերին և բատ այնմ անվանվում են
դրսի , ներսի , վերին և ներքին ուղիղ մկաններ ; Յեք-
կու թեք մկաններից մեկը զանվում և վերեվ , մյուսը՝
ցած :

Բացի ցածի թեք մկանից , մնացած հինգ մկաննե-
րը սկսվում են որբիտայի դաղաթից , աչքի հետեւում
դանվող ջլային ողից . ուղղվում են առաջ և կպչում
կարծրենուն : Չորս ուղիղ մկանները կպչում են կարծ-
րենու առջեւիկի մասի աչքի չորս կողմերին , յուրա-
քանչյուրը լիմրից վորոշ հեռավորության վրա : Վե-
րին թեք մկանը թեքվում է դեպի որբիտայի վերին
ներսի մասը , ընկնում և ճախարակի վրա ու դետեղվե-
լով վերին ուղիղ մկանի տակ , բնթանում և աչքի

Հետեւի զրոխ մասով և կոչում և սկլերային հասարա-
կածի մոտ : Յածի թեք մկանն ոկավում և որբիտայի
ցածի ներսի մասից , ընթանում և ցածի ուղիղ մկանի
առակ և կոչում և սկլերային հասարակածի հետեւում :
Աչքի շարժումները կատարվում են հետեւյալ կեր-
պով . գեղի դուրս կամ գեղի ներս շարժվելիս կծկը-
վում են զրոխ կամ ներսի ուղիղ մկանները , վերեկ
շարժելիս վերին ուղիղ և ցածի թեք , իսկ ցած շարժ-
վելիս՝ ցածի ուղիղ և վերին թեք մկանները :

ԱՉՔԻ ՄՆԱԽՆԴԻ

Աչքը սնող բաղմաթիվ մեծ և վոքը անոթները
պետեղված են անօթենու մեջ . բացի նրանցից ցանցե-
նին յելս ունի յուր զարկերակը : Նրանք բոլորն ա-
ռաջանում են արտերիա ովթալմիկայից , վորը յուր
բաղմաթիվ ճյուղերով մատակարարում և որբիտայի-
ամբողջ պարունակությունը : Յերակային արյունը
հայտափելով բաղմաթիվ մանր անոթներով միանում ,
կազմում և մեկ յըրակ , վորն ակնակապիճի վերին
դրոխ անցքով դուրս և դնում որբիտայից :

Վոսդեյակը և ապակենման մարմինը սնվում են
ներակնային հեղուկով , վորը պատրաստվում և ծիս-
ծանի ու ցիլիար մարմնի մեջ , կուտակվում և յերկու
կամերաներում և յուր բնախոսական աշխատանքը կա-
տարելով հեռանում և աչքից , անցնելով հետեւի կա-
մերայից գեղի առջելի կամերան և այստեղից մտնում
և Շլեմյան կանալը :

Կոպի շրջանաձեզ մկանը և արտասվալեղձերը
ներվավորվում են դիմային ներվով։ վերին, ներքին
և ներսի ուղիղ մկանները, ցածի թեք մկանը, ծխա-
ծանի մեջ դանովով բիրի սեղմիչը, վերին կոսլը բարձ-
րացնող մկանը ներվավորվում են ակնաշարժիչ ներ-
վով (ոկուլոմոռպրյուսով), վերին թեք մկանը ճախա-
բակային՝ արոխելարիս ներվով, բիրի բայնիչը՝ սիմ-
պոտիկ ներվով։ դրսի ուղիղ մկանը՝ զատիչը՝ ներ-
վով, (որդուցենսով)։ Աչքի և նրա սժանդակ մասերի
բոլոր զգայուն ներվերը կազմում են յեռաբմասա
(արիդեմինիս) ներվի բազմաթիվ թելիկները։

ԱԶԲԻ ՏԵՍՈՂԱԿԱՅՆ ԲՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԻ

Ուղեցեք լուսանկարչական ապարատը զեպի վո-
րեկի առարկա և նայեցեք սեղ շորի տակից ապարատի
հետեւի կաթնազույն ապակուն։ զուք կանոնեք այլ-
տեղ առարկայի փոքր և հակադիր պատկերը։ Ինչպես
է կատարվում այդ։ Լույսի ճառագայթներն ընկնելով
լուսանկարչական ապարատի որյեկտիվի մեջ դանովով
ուսուցիկ ապակիների վրա, բեկվում են, ընդունում
հակադիր ուղղություն և թափանցում ապարատի հե-
տեւիում դանովով կաթնազույն ապակու վրա, ուր և
կազմում են առարկայի փոքր և հակադիր պատկերը։
Ճիշտ նույնն է կատարվում և աչքի մեջ։ Առարկայից
սրացուղ լույսի ճառագայթներն ընկնելով յեղջերե-
նու վրա հաջորդաբար բեկվում են աչքի բոլոր թա-

վիանցիկ միջավայրում, յեղջերենու ջրային հեղուկի
վոսպնյակի և առակեհնման մարմնի մեջ, ընդունում են
հակագիր աւզություն և ընկնելով ցանցենու վրա
կազմում են առարկայի փոքր և հակագիր պատկերը.
բայց արդեն ժամանել հասակից մարդիկ ընտելանում են
լըրանելու առարկայի իրական դիրքը, տեսնելու նրան
գոչ թե հակագիր, այլ ուզիկ գիրքով:

Յանցենու վրա, լույսի ճառագայթներից կազմ-
ված առարկայի պատկերի ընկած վայրում ներվային
ելեմենտները զրդովում են, (չորհիվ վորոշ Փիդիկո-
ւիմիական պրոցեսի), տեսողական ներդիլի միջայով
այդ զրդիով հազորդվում է կենարոնական ներվային
համակարգությանը՝ գանգուղեղին ուր և կազմվում
է աչքով տեսած առարկայի համապատասխան մտա-
պատկերը: Բայց ի՞նչովես և աչքը զանազան հեռավո-
րություններից յեկող ճառագայթների միջոցով տար-
րեր տարածություններում զտնվող առարկաների
պատկերն ամփոփում անպայման ցանցենու վրա:

Այս հնարավորությունը ստեղծվում է չորհիվ
վոսպնյակի առաձղականության, վորը հարմարվելով
տարածությանը, ուժեղացնում կամ թուլացնում ե-
յուր ուռուցկենությունը և բեկում աչքն ընկնող ճա-
ռագայթներն այնպես, վոր նրանք անպայման ընկ-
նում են ցանցենու վրա:

Աչքի այն ընդունակությունը, վորի չորհիվ ճա-
ռագայթները բեկվում են ու կազմում առարկայի
պատկերը, կոչվում և աչքի բեկունակությունը, կամ
ուժիակցիան. իսկ աչքի հարմարվելը, տարբեր տա-
րածություններից յեկող ճառագայթների միջոցով

առարկայի պատկերն անպայման ցանցենու վրա դցելը՝ կոչվում և ակկոմոգացիս։ Բացի սրանից, աչքն ունի նաև դույների զգացում։ Աւելի ակկոմոդացիան, ակկոմոդացիան և զունազգացումը հանդիսանում են աչքի ոպտիկական հատկությունները, կամ այն անհրաժեշտ պայմանները, վորոնց չնորհիվ աչքը կարողանում է զանազան տարածություններից տեսնել տարբեր տարկաներ, զանազան դույներ։

Այսպիսով տեսնելու և առարկայի ժամապատկեր, ստեղծելու համար անհրաժեշտ են աչքի բոլոր մասերի, նրա բեկող միջավայրերի առողջ դրությունը, ցանցենու, տեսաներվի և զանդուղեղի կանոնավոր համապորձակցությունը։ Այդ պայմաններից վորեկել մեկի խախտումը անխուսափելիորեն առաջացնում է տեսողության խանդարում, թուլություն կազմույնիսկ կուրություն։

ԻՆՉՊԵՍ ԶԱՓԵԼ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Յերեմի մեկի աչքն ավելի սրատես և մյուսից։ Հետողության սրությունը չափելու համար դրած այս ածվում զանազան տախտակներ, դրազետների համար տառերով, անդրազետների՝ զանազան նկարներով։ Կամ նշաններով։

Տախտակը փակցվում է լավ լուսավորված սենյակում, ովատաւհանի դիմացի պատին, կամ արհեստական կերպով լույսը զցվում է տախտակի վրա։ Քննվողը նստում է տախտակի դիմաց հինգ մետր տառածության վրա։ Նրան առաջարկվում է կարդալ տառածությունը զանազան պահանջման համապատասխան առաջարկություններում։

ոերը, կամ անվանել նշաններն ու նրանց ձեվերը. յուրաքանչյուր աչք ուսումնասիրվում է առանձին, փակելով 2-րդ աչքը:

Առաջին տողում տառերը կամ նկարն այն մեծության են, վոր հիվանդը լավ տեսողությամբ կարողանա կարգալ 50 մետր տարածությունից. մնացած տողերի տառերը կամ նշանների մեծությունն աստիճանաբար փոքրանում է առաջին տողի համեմատությամբ 2,3,4, և այլելի անդամ: Այսպիսով նորմալ տեսողություն ունեցողը պետք է կարողանա վերջին 10-րդ տողի տառերը կարգալ 10 անդամ փոքր տարածությունից:

Ուրիմն յեթե քննվողը 5 մետր տարածությունից տեսնում է տախտակի վերջին տողը, նրա տեսողության սրությունը նորմալ է. (այդ գեղգում զբուժեն՝ տեսողության սրությունը համասար է մեկ ամբողջի), իսկ յեթե քննվողը 5 մետր տարածությունից տեսնում է կարգում է միայն 3-րդ տողը, հազար նրա տեսողության սրությունը համասար է 0,3-ի, 4-րդ տողը՝ 0,4-ի և այլն: Իսկ յեթե այդ տարածությունից նա չի նշմարում նույնիսկ առաջին տողը, ուրիմն նրա տեսողության սրությունը թույլ է 0,1-ից. այս դեպքում նրա աչքի առջեկվ պահելով մատները, առաջարկում են հաշվել. այն տարածությունը, վորից քննվողը կարողանում է ճիշտ հաշվել մատները, հանդիսանում է նրա տեսողության սրությունը. այսպես որինակ, յեթե նա տեսնում է յերկու մետր տարածությունից, ուրիմն տեսողության սրությունը համասար է մատների համբանքը 2 մետր տարածությունից: Այդ դեպքում յերբ մատներն անդամ չի տեսնում նույն-

իսկ ամենամոռ տարածությունից, այլ միայն նշմարում և լույսը խավարից, այն ժամանակ նրա տեսության սրությունը հավասար է լուսազգացման։ իսկ յեթև նույնիսկ լույսը խավարից չի տարբերում, հավասար է 0-ին։ Յուրաքանչյուր աչքի տեսողությունը չափվում և նշվում է առանձին։

ԱԶԲԻ ԱՌՋԵՎԻ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՆԱԴՐԻԹՅՈՒՆԵՐ

Յերեք հիմնական պատճառներ, բայց տրախոմալից, առիթ են տալիս համասոտ կերպով կանգ առնելու նաև աչքի առջեվի հատվածի վորոշ հիվանդությունների վրա։

Առաջին պատճառն այն է, վոր տրախոմայով հիվանդը կարող է միտքամանակ տառապելիս լինի աչքի առջեվի հատվածի մի այլ հիվանդությունով յեկու, գորն անկարելի յե նկատի չունենալ տրախոման բուժելիս։

Յերկրորդ պատճառն այն է, վոր աչքի առջեվի հատվածն ունի մի շարք հիվանդություններ, վերսից մասին չխմանալով— տրախոմայի դեմ պայքարողը կարող է խառնել տրախոմայի հետ, ուրեմն և, ինք նուրույն աշխատելու դեպքում սիալ բուժում կատարել։

Յերրորդ յերրորդ պատճառն այն է, վոր տրախոմայի դեմ պայքարողն անկախ տրախոմայից, կարող է անակնկալ կերպով հանգիստել առջեվի հատվածի այնպիսի վնասվածքների, կամ հիվանդություն ների, վորոնց հարկավոր և անհապաղ ողնություն

հասցնել բժշկի բացակայության դեպքում, կամ
հմտանալով բժշկել ինքնուրույն, առանց բժշկին սպա-
սելու, կամ ըմբռնելով շտապ ողնության կարիքի
նշանակությունը, դիտակցել, վոր իր ուժերից վեր և
ողնությունը, անմիջապես ուղարկել բժշկի մոտ:

ԿՈՂԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողի վրա կարող են տեղի ունենալ այն բոլոր
հիվանդությունները, վորոնք առաջանում են ընդհան-
րապես մաշկի վրա: Դրանցից են՝

1) կարմիր քամին.— Կողի կամ աչքից վոչ հե-
ռու մաշկի մի այլ տեղում սկսվում և սահմանափակ
կարմրություն, այսուց, տաքություն. բորբոքումը
տարածվելով յերբեմն պատռում է 2 կողերը, նրանց
ըրջապատող մաշկը: Այսուցն որորի վրա ավելանում
է, կողերն ամբանում, իրար մոտենում ու յերբեմն
աչքն ամբողջուղես ծածկվում է:

Հաճախ միաժամանակ աեղի յեն ունենում հե-
տելյալ ընդհանուր յերեվույթները.— Ընդհանուր
թուլություն, տուքություն, զվարացավ, յերբեմն վըս-
խում: Այս յերեվույթները մի քանի որից հետո անց-
նում են, իսկ աեղի բորբոքային յերեվույթները դեռ
չարունավում են: Հաջող գեղքում մի քանի որ հետո
սկսվում են նվազել նուև տեղի յերեւույթները: Կար-
մրությունը պակսում է, այսուցն անցնում է, հի-
վանդի ինքնողգացումը լավանում, աչքը բացվում է
առանց հետեանքների հիվանդությունը վերջանում:
Բայց պատահառում է և ընդհակառակը. հիվանդադին

պրոցեսի մեջ ներգրավվում են մաշկի ավելի խոր չերտերը. տեղ-տեղ կարմրած վայրի վրա առաջանում են զանազան մեծության բշտիկներ. նրանք սպառովում են, դուրս և հոսում հեղուկ պարունակությունը. յերբեմն թարախակալում են մաշկի ավելի խորը չերտերը, այսպիսի դեելքում հիվանդությունը տեսում է յերկար, ունենում և ծանր լինթացք, յերբեմն վտանգ սպառնում տեսողությանը:

Հիվանդությունն առաջ է դալիս մաշկի քերծվածքների վրա կարմիր քամու մանրեների բուն դնելու հետևանքով: Կարմիր քամին խիստ վարակիչ հիվանդություն է. հեշտությամբ տարածվում է շվամանմիջոցով, ուստի և չափազանց զղուշ սետք է լինել հիվանդին խնամելիս, նրա անկողնուց, հաղուստից, նրա ձեռք տված բոլոր իրերից և ամանեղինից, ճանճերից, վսրոնք համառորեն հայլարիվամ են բորբոքված տեղի վրա, մի խոռոքով այն ամենից, ինչ ձեռք և տալիս հիվանդը, ինչ դործածվում է հիվանդի համար: Այս պատճառով անհրաժեշտ է հիվանդին խնամելիս ծայրահեղ մաքրություն պահպանել, ամեն անդամ հիվանդին կամ նրա գործածած իրերին ձեռք տալուց հետո մաքրուր լվացվել սապոնով, հականեխել ձեռքերը սուլեմայով, կամ կարբույան թթվուտի լուծույթներով (տ. բ. № 1-ին և № 2-րդ): անհրաժեշտ և անպայման առանձնացնել հիվանդին և նրա բոլոր շորերն ու իրերը մեկուսացնել:

Բուժում. — Վերջին ժամանակներս համարյա տեղային բուժում չեն կատարում, բայց և այնպես բոր-

բոված ու կարմրած տեղի շուրջը թեթեվ իսդ քոելը
վաս չկ շորով, բինտով չփաթաթել:

Արական մեկ անդամ կատարում են հիվանդի յուք
արյան սրսկումը՝ այսպես կոչված առատոհեմոթերա-
պիա, վերցնելով յերակից 6,7,8, 10 դրամ և սրսկե-
լով նատելատեղի մկանների մեջ 7-8 որ: (Ներարկումը
կատարում է բժիշկը, կամ նրա անմիջական զեկավա-
րությամբ՝ քույրը):

Բացի արյան ներարկումից, զործադրվում են
նաև բժշկի նշանակած գեղորայքը:

Հիվանդության վարակիչ լինելու մասին անհրա-
ժեշտ և զգուշացնել շրջապատին, խստիվ արդելել
շփումը, առնչությունը և հետեւ մաքրությանը:
Անհրաժեշտ է, այս բոլորը լավ իմանալով հանդերձ,
յեթե մոտ է բժիշկը, հաճախակի դիմել նրան և զեկա-
վարվել նրա ցուցումներով: Կարմիր քամուց հետո կո-
պերի վրա յերբեմն կարող են առաջանալ սպիներ, վո-
շից կոպերը կարող են կարճանալ, արտաշրջվել և
աչքը մնա կիսարաց: Հիվանդանալուց հետո որդա-
նիկմը կայունություն չի ստանում, այսինքն մեկ ան-
դամ հիվանդացողը կարող է կրկին վարակվել կար-
միր քամով:

Սիրիախտ. — Կոողի մաշկի հիվանդություններից
և նաև սիրիախտը՝ չափազանց վտանգավոր և սուր
վարակիչ հիվանդություն, թեպետ նա անհամեմատ
ավելի քիչ և պատահում, քան կարմիր քամին, բայց
վտանգավոր լինելու պատճառով անհրաժեշտ և լավ
իմանալ և լուրջ ուշադիր լինել:

Սիրիախտը շատ և տարածված կենդանիների

մեջ . ուստի և սիրիախտով հաճախ վարակվում են նրանք , վորոնք զործ ունեն անտառների հետ՝ հովիվները , մսաղործները , կաշեղործները , մորթու բրդի , խողի մաղի հետ զործ ունեցողները և այլն : Հիվանդությունն սկսվում է մորթու վրա մուգ կարմրագույն սահմանափակ այտուցով , հետաղայում վերածվում է արյունալից հեղուկով լի բչակիկի , դրսից նա չորանում է , պատում կեղեղով և սեացած անկենզան մորթով , այսինքն նեկրոզով : Սիրիախտը տարածելով յերբեմն կարող է ընդզրկել ավելի մեծ վայրեր :

Որոֆիլակտիկան և բուժումը .— Այս հիվանդության մասին կտսկածն անդամ բավական է , վորակեսողի չուտափությունը միջոցներ ձեռք առնելու համար չտալ հրավիրվի բժիշկը : Հիվանդի , նրա շորեղենի մեկուսացումը , ընտանիքի անդամների տուանձնացումն ուղղուչացումը կարենը արժեք ու նշանակություն ունին վարակը չտարածելու տեսակետից : Հիվանդության լիկ վիզացիայից հետո խիստ կարենը և ամրող շորեղենի , կահկարստիների , սենյակի կտնոնավոր հականեխումը . ներկայումս բուժման ընդունված միջոցն է նեռալվարսանի ներտրկումներն արյան մեջ . սա բըժը կի զործ է : Հիվանդության հետեանքները՝ հաջող դեպքում կոպի վրա առաջանում է ուժեղ սովորացում , կոպերը կարճանում են , ոչքը բաց և մնում : Շատ դեպքում հիվանդությունը մահացու յե , մահավանդ բուժումն ուշացնելիս :

ԿՈՊԻ ՅԵԶՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոպի յեզրի հիվանդությունը կոչվում է բլե-
ֆարիտ։ Բլեֆարիտները լինում են՝

1) Հասարակ կամ թեփոտով,

2) Խոցավոր,

1) Հասարակ կամ քեփոտով բլեֆարիտի ժամանակ կոպի յեզրը քիչ թե շատ կարմրում է ու ոլատում թեփուկներով։ յերբեմն արտելվանունքերը թափում են։ Հիվանդը դանդատվում է քորից, աչքերի շուռ հողնելուց։ կոպի յեզրը զյուրագրվելու և դառնում քամու, վոշու, ծխի նկատմամբ։

2) Խոցավոր բլեֆարիտի ժամանակ կոպի յեզրը կարմրում է։ Հասարամում, ոպատում ամուր կեղենեցով, վորոնք տուաջանում են խոցի թարտիսակալումից։ Արտելվանունքները յերբեմն թափում են, մագարմատների մոտ տուաջոցած խոցերից տեղի յենունենում սպիացումներ, վորոնց ոպատճառով հետապայում աճող արտելվանունքները դասավորվում են անկանոն, նվազ, թույլ, զունամ։ կոպի յեզրը հասարամում է, ծանրացած ամբողջ կոպին իջնում է։

Հիվանդությունը յերկու դեպքում ել համառ և, յերկարատե։ Բլեֆարիտների պատճառը կարող է լինել գեղձախտը։ այս գեղձում հաճախ հիվանդ յերեխաները միաժամանակ տառապում են նաև ականջի թարտիսահոսությունով, առամների անկանոն աճով, դիխին և դեմքի վրա խոցերով, արյան պակասությունով, թույլ, նվազ կաղմվածք ունեն (և ուրիշ բնորդ հանուր յերեռոյթներ, վորոնք հատուկ են այս-

պես կոչված զեղձախտային (զոլոտուխտային) սկզբու-
ֆուլյուզ գրության) :

Բլեֆարիաները կարող են առաջանալ նաև կեն-
ցազային հակասանիտարական ոլորտներից, աչքի-
անկանոն տեսողությունից, ստաֆիլոկոկկ մանրէնե-
րից և այլն : Այսպիսի հիվանդները կարիք ունեն
լժշկի մանրամասն ու բարձակազմանի ուսումնասի-
րության և համապատասխան բուժման :

Բժշկի բացակայության զետքում նախ պետք է
հստացան հիվանդին հիվանդության յերկարատե, հա-
ֆառ լինելը, ուստի և բուժումը պետք է լինի նույն-
պես յերկարատե ու կանոնավոր : Ապրել սանիտարա-
կան ավելի լավ պայմաններում, յեթե կա վորեկ հա-
րստե ազդակ, վորից և առաջացել և բլեֆարիա,
ապա անհրաժեշտ և աղատովել նրանից, անընդհատ
չլարել աչքերը, մանավանդ թույլ և վատ լույսի
տակ : Խոցերի ու կեղեիկների ներկայաւթյան զետքում
անհրաժեշտ և վարվել հետեւալ յերակ . մի քանի որ
ենուկի յեղրին քսել բորբթթվուածի 2%-ոյին ոժանհ-
յիք (տես ը . №3) կամ մաքուր վագելին (տես ը .
№ 4), վորպեսզի կեղեիկները փափկեն և կարելի լի-
նի պինցետով բանել և վերցնել, կամ բամբակով
պղուշությամբ առանց քերծվածքներ տառաջներու-
մաքրել : Կոտի յեղրը կեղեիկներից աղատելուց հետո
պետք է աւշադրություն դարձնել հետեւալին, յեթե
խոցուած մակերեսը շատ փուխր է, մի յերկու որ
քսել միայն 14 %-ոյին արգելուում նիտրիկումի
լուծույթ (տես ը . № 5) վաքրիկ վայրի ծայրին վա-
թաթած բամբակով, վորպեսզի կոտի քայքայված

յեղքը. Քիչ թե շատ դարադելով ամբանա, իսկ նրանից հետո յերկար ժամանակ զործադրել 1% դեղին ուղղելիք ոծանելիք (տես ը. № 6), վորը կնպաստի հաստացած յեղքի բորբոքային յերեռւյթների ներծծմանը և հականեխմանը :

Յերեմն կողի յեղքին շարժած բազմաթիվ փոքրիկ թարախակալած բշտիկներն առաջանում են դեղին ստաֆիլակուլի մանրեներից, ուստի և մաքրելով այդ բշտիկներից, կողի յեղքին քոռում են բրիլյանտ գլքառնի 1% լուծույթ (տես ը. № 7), վորը հականեխմով վոչնչացնում ե մանրեներին և կողն առաջանում է :

Յերբ լէեփարիան առաջացել ե տեսողության անկանոնությունից, բժիշկը համապատասխան ակնոցներ և նշանակում լավ սնունդը, մաքուր ողը, հանգիստ կյանքը հաճախ չափազանց լավ ազդեցություն են ունենում :

ԳԱՐԵԿ.— Կողի յեղքի ճարպադեղձերի կամ արտելանունքի մաղարմտոի բորբոքումը կոչվում է դարեկ. դարեկն սկսվում է կողի վրա զգացվող ընդհանուր ցավով, կարմրությունով և այսուցով։ Կողի վրա տեղի ունեցող ընդհանուր յերեռւյթների պատճառով սկզբում անհասկանալի յե լինում թի ինչն է ցավերի պատճառը, բայց մատը զգուշությամբ կողի վրա տանելիս ընդհանուր այսուցի տակ հայտարերվում է մի կետ, վորը համեմատորեն ավելի ոլինդ և և ցավոտ. մի յերկու որ անցնելուց հետո, այդ ցավոտ վայրում արտահայտվում է դարեկի թաքտիսկալած դեղնաղույն դլխիկը։ Գարեկը յեր-

բեմն ուժեղ ցավեր և պատճառում մինչեւ զլխիկի պատավելը և թարախի դուրս գալը:

Բուժումը.—Գարեկի զլխիկը ճեղքելու համար բարպացնում էն բորբոքման ընթացքը, զնելով նրա վրա հաճախակի տաք թրջուկներ, շորի մեջ փաթոթած տաք դարձան, կամ նշանակում են տաք կոմպլպրեսներ 2% բորաթթվուտի լուծույթով, փոխելու այդ 6—7 ժամը մեկ անգամ: Յերբ գարեկի զլխիկը պատառմ է և ցավերը թեթևանում, տաք կոմպրեները դեռևս 1—2 որ շաբունակում են, վորպեսպի թարախը մասսամբ դուրս դա և մասսամբ ներծծվի: Բնդհանուր առմամբ հիվանդությունը տեսում է մեքանի որ, անցնում և անհետ: Պատահում է վոր միենույն անձնավորության նույն կոպի վրա հաճախակի կրկնվում և գարեկը. այդ դեպքում անհրաժեշտ ե բժշկական քննություն և համապատասխան ընդհանուր բուժում:

Կարկափիկ.—Կարկափիկը կոճիկի սահմանափակ և յերկարանի բորբոքումն և, արտաքաւոտ մաշկը շարժուն և, նրա տակից ցցված կարկափիկը զնդիկի նման զղացվում և անշարժ յուր տեղում. կարկափիկը ցավեր չի ստացնում, պատահում և յերբ իրար կողք տնում են 2—3-ը, յերեմն իրենք իրենց ներծծվում են, կամ առանց միշտառության ճեղքվում և նրանց պարաւակությունը դուրս և թափվում:

Բուժում.—Ներծծվելու համար զործ են ածում 1% զեղին անգիկի ոծանելիք (տես ը. № 6), վորն ապակյա թիսկիկով որական մեկ անգամ հատիկի չափ զնում են կրնյունելախվալ ոլտրկի մեջ: Զնիք-

ծըծվելու դեպքում անհրաժեշտ է լինում կոպի ներսից կամ դրսից, կտրվածքի միջոցով, հեռացնել կարկտիկն իր պարկով. այս արգեն բժշկի գործ ե, վորի մոտ և պետք է ուղարկել հիվանդին զեղին սնդիկի ոճանելիքը չողնելու դեպքում:

ԿՐՊԻ ԶԱՐԴՎԱԾՔՆԵՐ, ՊՍՏՈՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ԱՅԲ-
ՎԱԾՔՆԵՐ

Կոպի մաշկի անօթների պատովածքից առաջ են դալիս յերրեմն այնքան ուժեղ արտահայտված արյան զեղումներ, վոր կոպերը գաւոնում են մուգ կարմրադույն, կապատկույն. մեծ մասամբ ցալ չի լինում, այս յերեւույթը կարող է տեղի ունենալ յերբեմն բութ հարվածից: Բայց կարող է արյան զեղումն առաջանալ նաև չափազանց բարդ պատճառից, այն ե՝ դանդի հիմքի վոսկորների ճեղքվածքից, վորը տեղի յե ունենում ուժեղ հարվածից, ուժվին ընկնելուց և այլ նման դեպքերում, յերբ միաժամանակ կարող են տեղի ունենալ ուղնղային բարդություններ ևս: Նման դեպքերում անհրաժեշտ է բժշկի անհապաղ ողնությունը և հիվանդի խնամքը նրա ցուցումներով:

Ինչ վերաբերում է թեթև պատճառներից առաջացած արյան զեղումներին, լավ է աղդում անմիջապես փակ կոպերի վրա ողու թրջուկներ կամ տաքացնող կոմպրեսներ զնելը, հակառակ դեպքում առողջացնող տեսում է յերկար ժամանակ և արյան զեղումն անհետանում է աստիճանաբար՝ դույնը մուղից բացի փոխվելով: Աշխատանքի կամ խաղի ժամանակ յերբեմն անսպասելի, անակընկալ հարվածից

կամ բարող են կոպի վրա տեղի ունենալ մաշկի կամ մաշ-
կի մկանային պատռվածքներ . նման վերքը ջրով
չլվանալ . անհրաժեշտ է միայն մաքրել ստերչված
(ստերիլ) մառլայով , թեթև իոդ քսել և վերքի վրա
մի կտոր ստերչված մառլա ու բամբակ դնելով , փա-
թաթել : Յեթե պատռվածքը խորն է , կարիք կա կա-
րելու , առանց ուշացնելու ուղարկել բժշկի մոտ :

ԿՈՆՑՈՒՆԿՏԻՎԱՅԻ ԿԱՄ ՇԱՂԿԱՊԵՆՈՒ ՀԻՎԱՆԴՈՒ-
ԹՑՈՒՆՆԵՐ

Շաղկապենին կամ կոնյունկտիվան սկսվում է
կոպի յեզրի ներսի կողմից , տարածվում է կոպի
ներսի ամբողջ մակերեսի վրա , կազմում է անցա-
ծալքը և ապա ծովելով սկսվում է կարծրենու վրա
և հասնում լիմբին : Այսովհետով կոնյունկտիվայով
պատաճ ամբողջ տարածությունը , սկսած լիմբից
մինչև կոպի յեզրը , այսինքն կոպի և աչքի արանքը ,
կոչվում է կոնյունկտիվալ պարկ :

Շաղկապենին սկլերայի վրա թույլ է նստած .
այսաեղ հնարավոր է պինցետով նրա ծալքը բանել և
բարձրացնել , իսկ կոճիկի վրա՝ ընդհակառակն ա-
մուր կտած է և այդ անել անկարելի յե : Կոպի վրա
նորմալ կոնյունկտիվան բաց կարմրագույն է , թա-
փանցիկ և հարթ , միայն կոճիկի վերին յեզրին պըտ-
կիկների ներկայության չնորհիվ անհարթ է : Կարծ-
րենու վրա կոնյունկտիվան հարթ է . նրա միջից
թափանցում են սպիտակ սկլերան և վերսկլերային
անոթները : Շնորհիվ կոնյունկտիվալ պարկի , աչքո-
մշտապես պահպատ է վորոշ ջերմաստիճանում , իսկ

կոնյունկտիվայի վրա արտադրվող լորձի, արցունքի, ճարպանյութի միջոցով նրա առջեկ հատվածը գլունը ուժում և թարմ դրության մեջ:

ԻՆՉՊԵՍ ԱՐՏԱՇՐՋԵԼ ԿՈՊԵՐԸ

Ներքեմի կոպը բութ մատը դնել կոպի յեղբին, թեթև ֆիկսել և ձգել դեպի ցած, առաջարկելով հիվանդին նույն միջոցին նայել վերեւ. այս ձեռվ ներքեմի կոպը հեշտությամբ արտաշրջում և մինչեւ անցածալքը և մատչելի դառնում զննման համար:

Վերևի կոպը հիվանդին առաջարկել փակ աչքերը ուղղել ցած, դեպի վոտքերը. արտելանունքների մոտ աջ ձեռքի մեծ և ցուցամատով բռնել կոպի յեղբը, ձգել ցած և թեթևակի առաջ. ձախ ձեռքի ցուցամատը հորիզոնական ուղղությամբ դնել կոպէ կոճիկային մասի մաշկի վրա, թեթև հետ հրել և նույն միջոցին աջ ձեռքի մեծ և ցուցամատով շրջել կոպը: Այս դործողությունը պետք է կատարել թեթև և սահուն, առանց ճնշում դործադրելու կոպին, նրա յեղբին, աչքին:

Վերին կոպի անցածալքը զննելու համար մեկ մատը դնել զգուշաբար արտաշրջած կոպի յեղբին, մնացած մատերը հենել ճակատին, առաջարկել հիվանդին փակ աչքերը հառել ցած և նույն ժամանակ աջ ձեռքի ցուցամատով ներքին կոպի վրայից թեթևակի սեղմել աչքը դեպի հետ, իսկ ձախ ձեռքի մեծ մատով հետ հրել արտաշրջած վերին կոպը. յերկու ձեռների այսպիսի համագործակցությամբ վերին կոպի անցածալքը հաջող բացվում է: Ձախ ցուցամատը

կարելի յէ մոխարինել ապակյա ցուպիկով . անցածալքը լավ է բացվում նաև կոսկը դիմարի կոպամբարձի վրա շրջելով : Յերբ կոպերն ուժեղ այտած են , ամբացած , ընդհուպ իսար մոտեցած , որինակ բլեննորբեայի ժամանակ , յերբ կասկած կա , վոր վակ կոպերի տակ յեղջերենու վրա կարող են խոցեր լինել , չափազանց զգուշ պետք ե լինել և յերբեք ճընչում չկործապրել կոտերը շրջելու համար , վարովհետեւ այսպիսի դեպքերում հիվանդ յեղջերենու վրա կարող են նորանոր բարդություններ առաջանալ : Նույն պայմաններում աչքի առջեկ հատվածը դնելու համար կարելի յէ նախորոք մի յերկու կաթիլ նովոկայինի կամ կոկայինի լուծույթով թմրեցնել կոպերն ու Դեմարի կոպամբարձը զդուշությամբ ներս առնելով հետ ձգել կոպերը , բանալ աչքը :

Մանուկների աչքը բանալը , կոպերը շրջելն ավելի դյուրին և պետք է յերեխային պառկեցնել ողնողի ծնկներին աջից , զլուխը վերցնել զննողի ծնկների արանքը . պատվիրել պառկած յերեխային պահել հարթ և անշարժ վիճակում , ամուր բոնելով ձեռքերը և հենելով բազուկը վոտներին . յերկու ձեսների մեծ մտերը զնել վերեկի և ներքեկի կոպերի վրա , թեթև ուղղ մել և հետ ձգել . այս ձեսով հեշտությամբ կարելի յէ ձգել կոպերը , բանալ աչքը : Վերին կոպը շրջելուց հետո , քիչ ձգելու դեպքում , կրացվի նաև անցածալքը . իսկ ներքեկի կոպի անցածալքը բացվում է առանց նախորոք շրջելու , միայն ուժեղ ձգելուց :

ԿՈՆՅՈՒՆԿՏԻՎԻՑ

Կոնյունկտիվայի կամ շաղկապենու բորբոքումը կոչվում է կոնյունկտիվիտ։ Կոնյունկտիվիտները լինում են սուր և խրոնիկ։ Կոնյունկտիվիտը սուր և եռչվում, յերբ սկսվում է միանդամից, զգալի յերեվույթներով, ահութ է կարծ և ընհակառակը՝ քրոնիկ և կոչվում այն կոնյունկտիվիտը, վորը սկսվում է դանդաղ, թույլ յերեւյթներով և տեսում է յերկար։

Սուր կոնյունկտիվիտ — 1-2 որվա ընթացքում հիվանդադին յերեւույթները սաստկանում են, կոպի կոնյունկտիվան դառնուք և ուժեղ հիպերեմիկ, պտկիկները մեծացած, կոռուպը քիչ թե շատ այտած։ կարծքենու վրան կոնյունկտիվան նույնալես հիպերեմիկ է, տեղ տեղ պատահում են արյան զեղումներ։ սկզբում արտադրուկը ջրիկ է, իսկ քանի դնում պըղտորվում է, դառնում թարախային։ յերբեմն քնածքամանակ թարախը հավաքվելով սոսնձում է իրար կոպերի յեղքերը, վորի պատճառով աչքերը բանալը դառնում է անհնար, մինչեւ քանիցս չլվացվեն և կոպերը չաղատվեն չորացած ճպորից։ Հիվանդն ըղում է ցալ, կոնյունտիվալ սլարկում ոտար մարմնի զվացում (կարծես կոպերի ներսը հող, մոխիր, ավազ և լցոլել)։ զգալի յելուսավախություն, կոպերի ծանրություն, հիվանդը զրկվում է հանդստից, աշխատանքից։ Հիվանդությունը տեսում է մոտ 15—20 որ և յեթե բարդություններ չեն առաջանում, աստիճանաբար բորբոքային յերեւույթները, թարախը, ցալն անցնում են և կոպերը, շատ չանցած, չաղատանը են։

Սուր կոնյունկտիվիտների գրդապատճառը վարակիչ մանրեներն են; Կոնյունկտիվալ պարկը յուր ջերմաստիճանով, անցածալքով ու լորձով չափաղանց նպաստավոր ե վորպեսզի պատճհմամբ նրա մեջ ընկած վորեվե մանրե, այնտեղ կանոնավոր աճի ու բազմանա: Այս ե սատճառը, վոր մոտ 60 զանազան մանրեներ հիմանդրեր և վոչ հիմանդրեր, հաջող աճում են կոնյունկտիվալ պարկում, յերբ ընկնում են այնտեղ: Հատկապես ուշադրության արժանի յեն կոխ-վիկոսի, Մորակս-Աքսենֆելդի մանրեները, վորոնք հարուցիչ են հանդիսանում չափաղանց տարածված սուր համանուն կունյունկտիվիտների: Մանրադիտակի տակ այս հարուցիչներից յուրաքանչյուրը յուր առանձնահատուկ տեսքն ունի: Մեղ մոտ ամենից շատ լինում ե ամառվա և աշնան ամիսների ընթացքում կոխ-վիկոսի կոնյունկտիվիտը, հաճախ ամբողջ ընտանիքով տառապում են այս կոնյունկտիվիտը, յերեմն այնքան ե տարածվում դպրոցականների մեջ, վոր կարիք ե լինում դասավանդումը ժամանակավոր դադարեցնել վարակն ել ավելի չտարածվելու նկատառումով: Պատահում ե, վոր առողջանալուց շատ չանցած նույն անձնավորությունը կըրկին հիմանդրանում ե:

Չնայած տարբեր հարուցիչների, հաճախ սուր կոնյունկտիվիտներն իրենց ընթացքով ու կըինիկական պատկերով իրարից քիչ են տարբերվում, կամ նույնիսկ չեն տարբերվում: Սուր կոնյունկտիվիտը կարող ե առաջանազ նաև ստաֆիլոկոկից, պնեվմոկոկից, բայց համեմատորեն ավելի քիչ: Սուր կոն-

յունկտիվիտները մեծ մասամբ յեղջերենու վրա բնրա
բոքում չեն առաջացնում: Թե վոր սուր կոնյունկտի-
տի հետ դործ ունենք տվյալ դեպօւմ ամենից ճիշտ
կարելի յե վորոշել միկրոսկոպային քննությունով.
Եայց վարժված բուժողը, շատ հաճախ, առանց
զրան ել, հիմնվելով տվյալ կոնյունկտիվիտի ա-
ռանձնատկությունների վրա կարող ե վորոշել
կոնյունկտիվիտը: Կոխ-Վիկով և Մորաքս-Աքսեն-
ֆելդի կոնյունկտիվիտները նրանով են տարբերվում
իրարից, վոր առաջինը միշտ ել արտահայտված և
լինում ավելի սուր, քան 2-րդը: Առաջինի արտա-
դրող թարախը, ճեսոն ավելի շատ ե քան 2-րդի-
նը. առաջինի դեպօւմ կարծրենու կոնյունկտիվայի
վրա հաճախ տեղի յեն ունենում արյան զեղումներ,
յերկրորդի ժամանակ վոչ. առաջինն ավելի շուտ
բնութագրվում ե ցալով, յերկրորդը՝ քորով. առա-
ջինը քիչ փոխվում ե քրոնիկի, մինչդեռ Մորաքս-
Աքսենֆելդի կոնյունկտիվիտը չափազանց հաճախ և
փոխվում քրոնիկի, տեսում յերկար, ունենում հա-
մառ բնույթ:

Այս բոլորի առկայությունն ու բացակայությունը
շատ դեպքերում հնարավորություն են տալիս ճիշտ
վորոշելու հիվանդությունը:

ՍՈՒՐ ԿՈՆՅՈՒՆԿՏԻՎԻՏԵՐԻ ԲՈՒԺՈՒՄՆ
ՈՒ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Կոնյունկտիվիտների բուժման առաջին պայմանն ե
կողերը և կոնյունկտիվալ պարկը մաքրել ճեղուից,
թարախից, արտադրուկից: Այս նպատակով սուր

կոնյունկտիվիտների ժամանակ մի շաբթ հականեխիչ
լուծույթներով լվացումներ են կատարում (տես ը.
№ 8 № 9) մաքուր լվացած և հականեխած ձեռնե-
րով։ Կոպերի լվացումը կատարվում է հետեւյալ
կերպով։ Հիվանդին նստեցնում են աթոռին, վզի
վրա, համապատասխան աչքի կողմը յուր ձեռքով
պահում յերիկամածե թասը— աչքը լվանալիս լու-
ծույթը հիվանդի վրա չթափվելու համար։ Լուծույ-
թի մեջ թրջած բամբակով քում են փակ կոպերի
յեղբին, աշխատելով նրանով սրբել արտադրուկն,
ճեպուլ։ Լվանալու ժամանակ հարկավոր է ձեռքին
տալ հորիզոնական ուղղություն, վորտեսզի հիվանդ
աչքի վրա հսոսդ հեղուկը վոչ թե թափվի լվացո-
ղի ձեռքի վրա, այլ յերիկամածե թասի մեջ։ Փակ
կոպերը մաքրելուց հետո, լվացումները շարունակ-
վում են կոնյունկտիվալ պարկը մաքրելու նպատա-
կով։ սրա համար տվյալ լուծույթը բամբակով,
սլիպետկայով, ուետինե բալոնով, անասեղ ատպակյա-
շպրիցով վերցնելով, թույլ հսոսանքով բաց են թող-
նում կոնյունկտիվալ պարկը, կամ կոպերի տակ
գոռությամբ ներս տանելով բալոնի, չլըիցի ծայ-
րը, կամ թե չե յերկու մատնելով թեթեվ հետ տա-
նելով կոպերն ու մզելով բամբակը կամ պիպետկան
աչքի վրա։ կարելի յե նաև կոսկերը շրջել, ընդհուպ
իրար մոտեցնել և վորեվե մի ձեռք լվանալ, բայց
ամենից լավն ե լվացումները կատարել բալոնով կամ
չպրիցով, կրկնելով մի քանի անգամ, մինչեվ վոր
գուրս հսոսդ հեղուկը յուր մեջ այլևս թարախի
հետքեր չունենա։ Լվացումները կատարելուց հետո

անհրաժեշտ ե հիվանդին մի քանի ըռոպե հանգիստ տալ, իսկ անհանգիստ հիվանդին լվացումից առաջ կոնյունկտիվալ պարկը կաթեցնել 2-3 կաթիլ նովոկային (տես ը. № 10): Լվացումները վերջացնելուց հետո բուժումը մասնավորեցնել հետեւյալ կերպով. Կոխակիկսի կոնյունկտիվիտի ժամանակ չըջած կոպակը խարել 2%-ային 2 կաթիլ արգենտում նիտրիտումի լուծույթով (տես ը. № 12) և ապա լվանալ 1%-ային աղաջրով (տես ը. № 13) որեկան մեկ անգամ, իսկ տանը նշանակել արտաքուստ աչքերը լվանալու համար չիչած հականեխիչ լուծույթներով (տես ը. № 8): Յեթե հիվանդը չի կարող հաճախել բուժման, նրան նշանակում են տանը դորձածելու ողբոտարկով 6%-ային լուծույթ (տես ը. № 14), կամ կոլարկով 3%-ային լուծույթ (տես ը. № 15). ավելի լավ ե վերջինս:

Մորաքս-Աքսենֆելդի կոնյունկտիվիտի ժամանակ չափազանց լավ են աղղում ցինկում սուլֆուրիկումի լուծույթի կաթիլները (տես ը. № 16)-կաթեցնել որեկան 2-3 անգամ ամեն անգամ 2 կաթիլ: Յեթե հիվանդը կարող ե հաճախել բուժման, և հիվանդությունն ուժեղ ե արտահայտված, նամանավանդ յերբ հիվանդությունը բարձրացնել ե և կոպի յեզրին կանթեթելակի քերծվածքներ, չափազանց հաջող աղղությունն ե ունենում ցինկում սուլֆուրիկումի 20%-ային լուծույթի դորձածումը հետեւյալ կերպով. անգայա ցուալիկի ծայրին փաթաթել բամբակի փոքրիկ կտոր վրձինաձեզ բայց չափազանց փոքր, կոպերը չըջել, ընդհուպ մոտեցնել իրար, նրանցով

ծածկել աչքը և կոսկի կոնյունկտիվայի մակերեսին
առանց ճնշում դորձաղբելու մեկ անգամ քսել 20%
-ային ցինկում սուլֆուլիկումի լուծույթը, ցուպի-
կի վրա փաթաթած, թաթախած բամբակով, առանց
հետաղայում լվացումներ կատարելու — մի քանի
որ, որեկան մեկ անգամ: Քսելուց հետո մի քանի
վայրկյան շրջած կոսկերը պահել անշարժ: Հատկապես
ուշադրություն դարձնել, վորպեսզի քսելու ժամա-
նակ ըրջած կոսկերը լավ մոտեցրած լինեն իրար, վոր-
պեսզի լուծույթը յեղջերենու վրա չհոսի: Այս
պետք է կատարվի կամ բժշկի ձեռքով կամ՝ բժշկի
հսկողությամբ: Յեթե հիվանդն անկարող և հաճա-
խել բուժման, կարելի յեն նշանակել տանը դորձածե-
լու ցինկում սուլֆուլիկումի լուծույթը թույլ դողա-
յով (տես ը. № 16) որեկան 2 անգամ: Յերբեք չմոռա-
նալ, վոր տանը և վոչ մի դեպքում չի կարելի նշա-
նակել ինքնուրույն դորձածման համար վոչ 2%-ային
արգենտում նիտրիկում վոչ ել 20%-ային ցինկում
սուլֆուլիկում:

Այն դեպքում, յերբ դժվար է միայն կլինիկա-
կան սպատկերով վորոշել, թե ինչ սուր կոնյունկտի-
վիտի հետ դորձ ունենք, անհրաժեշտ և պայքարել
հիվանդին յերեվույթների դեմ հետեւյալ կերպով:

1) թարախահոսության ժամանակ դորձածել
20% արգենտում նիտրիկումի լուծույթը՝ խարումներ
(տես ը. № 12) և ապա աղաջրով լվանալ (տես ը.
№ 13) մինչև վոր թարախը վերջանա: Թարախահո-
սության գեմ բուժումը տանը կատարելու համար

նշանակել 5% պլոտարկու կամ 3%-ային կուպարգու (տես ը. № 14 № 15) :

2) Յեթե արտադրուիը քիչ եւ և վոչ թարախացին, բայց արտահայտված են կոնյունկտիվիտի այլ յերեսույթները, նշանակել ցինկում սուլֆուլիկումի ընույլ լուծույթի կաթիլներ (տես ը. № 16) տանը դործածելու:

3) Յեթե միաժամանակ կան դգալի ցավեր, այդ դեպքում զործածելիք ցինկում սուլֆուլիկումի լուծույթին ավելացնել նաև վորուս ցավերը հանդըստացնող նովոկային (տես ը. № 18) :

4) Յեթե զգալի յե նաև հիոլերեմիան, այդ լուծույթին ավելացնել աղբենալին (տես ը. № 19) :

5) Բոլոր սուր կոնյունկտիվիտների ժամանակ կարեվոր եւ հականեխիչ լուծույթներով լվացումներ կատարել նախքան դեղելը (տես ը. № 8,9.) :

6) Յեթե զգալի յե կոռպի այսուցը, նշանակել 2%-ային բորաթթվուտի սառը լուծույթի թրջուկներ (տես ը. № 20) :

7) Յերբեք և վոչ մի դեպքում սուր կոնյունկտիվիտների ժամանակ աչքը չփաթաթել, խստիվ արդելել զանազան փալաներով կապելը, վորովհետեւ կոնյունկտիվալ պարկում կուտակված թարախը կարող եւ խոցեր առաջացնել յեղջերենու վրա ու բարդացնել հիվանդությունը:

8) Արդելել աչքերը տրորել թաշկենակով (առաջարկել փոխարինել այդ հականեխիչ լուծույթի ավելի հաճախակի լվացումներով:

9) Լուսավախության դեպքում կարելի յե դործածածել մուգ գույնի կոնսերվներ (հարթ ապակուց

մուգ ակնոցներ՝ սեվ, կապույտ, յերկնագույն)։ այս
աղակիներն արդելում են լույսի ուժեղ ճառագայթնե-
րին դրդուելու աչքերը։ կոնսերվիներ չունենալու դեպ-
քում խորհուրդ տալ մնալու անարկու սենյակում,
և յեթե անհրաժեշտ ե լույսի քանակը պակասեցնել,
կիսաբաց վարադույրով։

10) Մեծերի աչքերը հականեխիչ լուծույթով
լվանալու փոխարեն, կարելի յե նշանակել որական
2-3 անգամ նույն հականեխիչ լուծույթով աչքի վան-
նաներ (վաննաների դորձածման ձեվը տես յե-
րես 100)։

11) Փոքրերին բուժելիս, պետք ե պառկեցնել
պահողի ծնկներին, գլուխը վերցնել բուժողի յերկու
ծնկների արանքը, ճիշտ այնպես, ինչպես կոպերը
շրջելիս զննելու ժամանակ և նույն գեղորայքով բու-
ժել ինչպես մեծերին։

Պրոֆիլակտիկ միջոցառումներ։ Կոնյունկտիվ-
տի վարակը տարածում է հիվանդ աչքի արտադրու-
կու, կորն այս կամ այն ճանապարհով ընկնում և առողջ
աչքի կոնյունկտիվալ պարկը։ Հիվանդի սրբիչը, չո-
րեղենը, անկողինը, ամանեղենը, մի խոօքով այն ամե-
նը, ինչին կքսվի հիվանդի աչքի արտադրուկը հան-
դիսանում են հիվանդության տարածողը։ այս պատ-
ճառով չափաղանց դրսւչ պետք ե լինել այն ամենից,
ինչ գործածում, ձեռք և տալիս հիվանդը։ Հիվանդի
հետ շփում ունենալիս ամեն անգամ կանոնավոր ու
մաքուր լվանալ ձեռքերը։ Հիվանդին անհրաժեշտ
ժամանակավորապես մեկուսացնել դպրոցից, մանկա-
պարսեղից արդյունաբերությունից և ընդհանրապես
աշխատանքի վայրից, վորովհետեւ թեպետ սուր կոն-

յունկտիվիլիտը կուրացուցիչ չե, բայց արագ տարածավում, հաճախ կրկնվում, ժամանակավորապես մարդուն դարձնում և անաշխատունակ:

Յերկու կարևոր հանդամանքներ եւ ավելի անհամաժեշտ են դարձնում տրախոմայի դեմ պայքարողին լավ ուսումնասիրելու կոնյունկտիվիլիտը և յուրացնելու նրա բուժումը:

1) Շնորհիվ սուր կոնյունկտիվիտից առաջացած ուժեղ բորբոքային յերեվույթներին, կոնյունկտիվի դիմադրությունը թուլանում է և դյուրին և դառնուժ տրախոմայով վարակվելլ:

2) Տրախոմայով տառապող մարդիկ յեկա կարող են վարակվել սուր կոնյունկտիվիտով. ուստի և այն վայրերում, ուր տրախոման համեմատորեն շատ ետարածված, եպիգեմիկ բնույթ կրող սուր կոնյունկտիվիտը մեկից մյուսին անցնելով, պատճառ և դառնություն վարակելու նաև տրախոմայով, յերբ կոնյունկտիվիտով վարակող հիվանդը միաժամանակ տառապում է նաև տրախոմայով:

Այսպիսով համաճարակային բնույթի, կամ ընդհանրապես սուր վարակիչ կոնյունկտիվիտոների դեմ պայքարը, տրախոմայի դեմ մաքառման դրավականն է: Ահա թե ինչու տրախոմայի դեմ պայքարողի պարտականություններից մեկը պետք է լինի բացարական աշխատանք տանել այս ուղղությամբ այնտեղ, ուր հաճախակի կրկնվում է սուր կոնյունկտիվիտը, նամանավանդ տրախոմայով ավելի վարակված վայրերում:

Քրոնիկ կոնյունկտիվիտ. — Միենույն աղդակի

հարատեւ իրկնողությունը կարող է առաջացնել քրունիկ կոնյունկտիվիտ յերբեմն առանց վորեե վարակիչ մանրեյի ներկայության. որինակ ածուխի կամ ալյուրի ժոշուց, հարատեվ քամու աղդեցությունից, ծխի, տաքի և այլ պատճառներից: Քրոնիկ կոնյունկտիվիտը կարող է առաջանալ նաև կանոնավոր և վերջնականապես չբուժված սուր կոնյունկտիվիտից ինչպես հաճախ և այդ պատահում նամանավանդ Մորաքս-Աքսենֆելդի սուր կոնյունկտիվիտից:

Քրոնիկ կոնյունկտիվիտից կոպերը հաստանում են, կոնյունկտիվան զերարյունում, արտադրուկը շտանում:

Պրոֆիլակտիկան և բուժումը.— Յեթե վերացվեն հարատեվ կրկնվող աղդակները, յերբեմն այդ միայն բավական ե լինում, վորպեսզի քրոնիկ կոնյունկտիվիտը աստիճանաբար անցնի: Տեղային բուժումը կայանում ե նրանում, վոր կատարում են լվացումներ հականեխիչ լուծույթներով որեկան 2-3 անգամ (տես ը. № 8) ապա կատարում հետեյացը. յեթե կոպերը հաստացած են, զործածել գեղին սնդիկի ոճանելիք (տես ը. № 6), յեթե զերարնած են ու քիչ թե շատ ցավոտ, անհանդստություն են պատճառում հիվանդին— զործածել հանգստացուցիչ և հականեխիչ կաթիլներ (տես ը. № 18 № 19): Ինչպես յերկարատեւ և հիվանդության ընթացքը, այնպես և յերկարատեւ և նաև նրա բուժումը, այս պետք է իմանա հիվանդը և համառ ու յերկարատեվ ովտագործի բուժողի խորհուրդները, առաջարկած գեղութայքը:

Բլեննորբեյան դոնորքեայի (տրիպերի) մանրեներից առաջացած բորբոքումն է շաղկապենու կամ կոնյունկտիվայի վրա։ Կարող են հիվանդանալ թե նորածինները և լին մեծահասակները։ Նորածինների բլեննորբեյան առաջանում է ծննդաբերության ժամանակ, յերբ մայրը տառապում է սեռական որդանների գոնորբեայով կամ թե չե յերեխան վարակվում է ծնվելուց անմիջապես հետո։ Վարակվելուց մի յերկու որ անցած կոպերն ուժեղ այտում են, կարմրում, այտուցից կոպերն այնքան են պնդանում, վոր նրանց հետ տանելը, աչքերը բանալը դառնում ե անհնար։ Յերբ դժվարությամբ քիչ թե շատ հնարավոր ե լինում հեռացնել իրարից կոպերը, կոնյունկտիվալ պարկից դուրս և հոսում հորդ թարախը։ Մի քանի որից հետո այտուցը պակսում է, կոպերը փափկում են, աչքը քիչ թե շատ բացվում է և կամաց կամաց հնարավոր ե դառնում կոպերը շրջել ու դնել կոնյունկտիվան։ Կոնյունկտիվան լինում է հաստացած, հյութալի, մուգ կարմրագույն, անհարթ։ Կոպերն իրարից հեռացնելիս հոսում է զգալի քանակությամբ թարախոտ արտադրուկը։ Կոպերը շրջելիս այտած անցածալքը դլանաձեվ պրտափքում է, լավ արտահայտվում։ Մանկան քնած ժամանակ թարախը կուտակվում է կոպերի արանքը, չորանում ու իրար սոսնձում կոպերը։ Յեթե ժամանակին հայտաբերված հիվանդության դեպքում կանոնավոր կատարվի նայել բուժումը, հիվանդությունը

կտեղի 35—40 որ և որըստորեւ թեթեվանալով հե-
վանդը կառողջանա :

Հասակավորների բլեննորրեյան մեծ մասամբ ինք-
նավարակման արդյունք ե յուր ունեցած գոնորրեա-
յից— արիպերից, յերբ հիվանդը կեղաստ թարախոտ
ձեւներով տրորում ե աչքերը վարակը ներս տանե-
լով կոնյունկտիվալ պարկը : Բլեննորրեայի ժամանակ
չափաղանց հաճախ տեղի յեւ ունենում նաև յեղջերե-
նու բորբոքումը . բլեննորրեայից առաջացած յեղջերե-
նախոցն արագորեն տարածվում և մակերեսով և
խորությամբ . հաջող դեսկում, համառ բուժումից
հետո, յերբ հիվանդությունը վերջանում ե, յեղջե-
րենու վրա մնում ե սպի, հատ, վորի պատճառով զդա-
լի թուլանում ե տեսողությունը . անհաջող դես-
կում, վորն ավելի հաճախ է տեղի ունենում, բոր-
բոքումը տարածվելով դեղի ներս, ներդրավում և
աչքի մյուս թաղանթները յեկս, թարախակալում և
աչքն անխուսափելի հասցնում կուրության :

Բուժումը .— Շնորհիվ բլեննորրեայի մեծ մաս-
սամբ կուրացուցիչ վախճանի, բուժումը յեկս չափա-
ղանց պատասխանատու զործ ե : Յեթե բժիշկը բա-
ցակայում ե, կամ հիվանդին զանաղան հանդամանք-
ների պատճառով անկարելի յեւ տեղափոխել բժշկի
մոտ, տըրախոմայի դեմ պայքարողը պետք ե ողնու-
թյան հասնի հետեւյալ կերպով .

1) Ինչպես բոլոր կոնյունկտիվիտների, նույնպես
և բլեննորրեայի ժամանակ անհրաժեշտ ե նախ և ա-
ռաջ զգուշ, առատ և հաճախ աչքը լվանալ կալիհե-
ղերմանգանիկումի լուծույթով (անս թ . № 21) : Լվա-

ցումները կատարել նախ արտաքուստ։ կոպերը դըր-
սից և նրանց յեղերը կանոնավոր մաքրել ճպռից,
թարախից, հետո լվացումներ կատարել կոնյունկտի-
վալ պարկում։ Հիվանդության սկզբի շրջանում, յերբ
կոպերը տյտած են ուժեղ, անհրաժեշտ ե անել հո-
մախակի սառը թրչուկներ՝ փակած կոպերին։ յերբ
կոպերը քիչ թէ շատ փափկացան, այսուցը պակ-
ւեց, հնարավոր յեղալի իրարից հեռացնել, կամ
նույնիսկ արտաշրջել, նախքան կոնյունկտիվալ պար-
կը լվանալը, ոկտօք և զննել յեղերենու դրությունը։
յեթե նրա վրա խոցեր չկան, ուրեմն և դրությունը
դեռևս վտանգավոր չե, և հնարավոր և կոպերը հա-
մարձակ արտաշրջել ու նույն լուծույթով լվացում-
ներ կատարել նաև այստեղ։ իսկ յեթե հնարավոր չե
ուժեղ այտուցի, կամ խոցի պատճառով կոպերը ար-
տաշրջել, ապա անհրաժեշտ ե կոնյունկտիվալ պար-
կը լվանալ սեախին բայոնով, անասեղ շպրիցով փակ
կոպերի արանքից մի կողքով զղուշաբար ներս տա-
նելով շպրիցի կամ բալոնի ծայրն այնպես, վոր չքսի
յեղերենուն։ այս լվացումներից հետո աչքը կաթեց-
նել 10%-ային պրոտարզով, (տես ը. № 22) կամ
3%-սային կոլլարզով։ իսկ յեթե հնարավոր և արտա-
շրջել կոպերն, այն ժամանակ կանոնավոր լվացում-
ներից հետո խարել 2 օ/օ-ային արդենտում նիտրիկու-
մի լուծույթով շրջած ու ընդհուպ իրար մոտեցրած
կոպերը և լվանալ աղածրի 1%-ային լուծույթով։
խարելու ժամանակ անհրաժեշտ ե արտաշրջած կոպե-
րը իրար մոտեցնել ընդհուպ, վորպեսզի ավելորդ

դեղ չթափվի դեռևս առողջ յեղջերենու վրա, վորից
կարող են այրվածքներ, խոցեր առաջանալ:

Բուժումը նույնն է թե մեծերի և թե փոքրերի
համար. միայն մեծերին լավ ե միաժամանակ կա-
տարել նաև կաթի ներարկումներ 8-10 որ, ամեն ան-
դամ յերկու դրամ յեռացրած, աննշան տաքացնել
սրսկել նստելատեղի մկանների մեջ (կաթի ներարկու-
մը տես եջ 100): Բուժման ամբողջ ընթացքում յեր-
բեք աչքը չկապել, արգելել դանաղան չորերով փա-
թաթելը: Անկախ ձեռք առած միջոցներից, յեղի-
բենու վրա հիվանդության ընթացքում, կարող են
խոցեր առաջանալ և կուրացնել հիվանդին, ուստի և
վորքան ել լավ ընթանա բուժումը, այնուամենայ-
նիվ կուրության վտանդի մասին միշտ ել հիվանդին
պետք ե նախորոք զգուշացնել: Կարեվոր նշանակու-
թյուն ունի բուժման ընթացքում խստիվ մաքրու-
թյուն պահպանելը, վոչ միայն շրջապատին չվարա-
կելու նպատակով, այլև նրա համար, վորպեսզի
հիվանդն առողջացման ընթացքում ինքն իրեն կըր-
կին անդամ չվարակի: Այն ամենը ինչ դործ ե ած-
վում հիվանդի համար, ինչին ձեռք ե տալիս հիվանդը,
պետք ե առանձնացնել: Ամեն անդամ հիվանդին ող-
նություն հասնելուց հետո, անպայման ձեռները լվա-
նալ և հականեխել: Մոր սեռական որգանների գո-
նորրեայի ժամանակ կարելի յե խուսափել մանկան
վարակից, յեթե ժամանակին գործադրվեն անհրա-
ժեշտ միջոցառումներ, այն ե՝ անպայման նորածի-
նի կոնյունկտիվալ պարկը կաթեցնել և վորպես նա-
խաղղուշացուցիչ միջոց, ըստ կրեղեի անմիջապես

ծնվելուց հետո, 1 կաթիլ 2%-ային արգենտում նկառ
բեկումի լուծույթ։ այս պարզ և մատչելի միջոցով
փրկված են կուրանալուց բաղմաթիլ մարդիկ։ Յե-
թե վարակված են նորածինի մեկ աչքը, մյուսը չվա-
րակելու համար յերեխային պետք ե պառկեցնել հի-
վանդ կողքի վրա, վորպեսզի թարախը հիվանդ աչ-
քից քիցի վրայով չհոսի գեպի առողջ աչքը։ Մեծե-
րի առողջ աչքը չվարակվելու նպատակով առանձ-
նացվում է ժամացույցի ապակու տակ՝ փաթաթով։
ԿՈՆՅՈՒՆԿՏԻՎԱՑԻ ՖՈԼԼԻԿՈՒԼՅՈԶ ՅԵՎ ՖՈԼԼԻԿՈՒ-
ԼՅԱՐ ԿԱՏԱՐ

ՅԵՐԵՄՆ առողջ կոնյունկտիվայի վրա առաջա-
նում են զանազան մեծության հատիկներ, այսպես
կոչված ֆոլիկուլներ։ նրանք տարածված են լինում
մասամբ ցածի կոսի անցածալքի վրա և վերին կո-
պի անկյուններում, աճառի վերին մասում։ Փոլի-
կուլները քիչ մեծ կամ փոքր են գնդասեղի գլխից։
Քանակությամբ յերեմն զգալի և մարդարտաշար
դասավորված։ ՅԵՐԵ բացի ֆոլիկուլներից կոնյունկ-
տիվայի վրա այլ բարդություններ չկան, այդ դրու-
թյունը կոչվում է ֆոլիկուլյոզ։ իսկ յերե ֆուլի-
կուլների հետ միատեղ նկատելի յե նաև կոնյունկտի-
վայի բորբոքային դրություն՝ կոչվում է ֆուլիկուլ-
յար կատարը։ ՅԵՐԵՄՆ տեսողության թուլությունը,
յերեխաների արյան պակասությունը, կենցաղային
ու աշխատանքային վատ պայմանները կարող են
պատճառ դառնալ ֆոլիկուլյոզի և ֆոլիկուլյար
կատարի։

թուժում. — Թեթև դեպքում կարելի յէ թողնել
անհետեվանք, միայն ուշադրություն դարձնել աշ-
խատանքի ու կենցաղային այմանների բարելավման
վրա: Բորբքային զգալի յերեսութների ժամանակ
նշանակել ցինկում սուլֆուլիկումի լուծույթի կաթիլ-
ներ (տես ը. № 16), կամ ֆոլիկուլները արտաճրո-
շել — յեթե նրանք համառորեն մնում են. արտա-
ճնչումից հետո վոչ մի հետք չի մնում: Ֆոլիկուլ-
ների ներկայության պատճառով այս հիվանդությունը
կարելի յէ խառնել տրախոմայի հետ. բայց տրախո-
մայից նա տարբերվում ե՝ 1. Յուր բարորակ լնթաց-
քով և 2-րդ՝ առողջանալուց հետո կոնյունկտի-
վայի վրա վոչ մի սպի չթողնելով, մինչդեռ տրա-
խոմայի ֆոլիկուլների արտաճնչումից հետո առա-
ջացած սպիների ներկայությունն անխուսափելի յէ:

ԳԱՐՆԱՎՈՒՆ ԿԱՏԱՐԻ

Կոնյունկտիվայի հիվանդություններից ե նուե-
գարնանային կատարը: Այս հիվանդության յերե-
վույթները տեղի յն ունենում յերբեմն կոպի աճա-
ռային մասի վրա, կամ յեղջերենու շուրջը՝ լիմփի
մոտ:

Այն դեպքում, յերբ հիվանդությունը կենտրոնա-
ցած ե լինում կոպի վրա, աճառային մասի կոնյունկ-
տիվան պատած ե լինում սերտորեն կողք կողքի
նոտած անկանոն շրջանաձեվ բազմաթիվ հատիկաձեվ
ուռուցներ. նրանց ընդհանուր տեսքը նման ե մանր
և կլոր դետաքարերով խճած հատակի, առաջին
հայացքից նրանք կարծես նման են ֆոլիկուլների,

գրա համար ել յերբեմն այդ հիվանդությունը խառա
նում են տրախոմայի հետ, բայց դարնանային կա-
տարրը, վորի ժամանակ բացի այդ յերեսութից հա-
ճախ լինում ե նաև պակիկների գերած, վոչ այլ ինչ
է, յեթե վոչ կոնյունկտիվայի տակը դտնվող հյուս-
վածքի հատիկաձեվ աճ ե և վոչ թե իսկական ֆուլի-
կուլ. այդ տարբերությունը ակնահայտ ե դառնում
ապակյա թիակիկով նրանց ճնշելիս, վորից նրանք
բացարձակ գունատվում են, իսկ ֆուլիկուլներն
իրենց զույնը չեն փոխում: Նրանք յերբեք չեն ճեղք-
վում, ինչպես ֆուլիկուլները և վերջինիս նման իրեն-
ցից հետո սպիներ չեն առաջացնում:

Յերբ հիվանդությունն արտահայտված ե լինում
միայն լիմբի վրա, կամ գերակշող ե հանդիսանում
այստեղ, պարզվում ե, վոր սա յեկտ հյուսվածքի
հատիկաձեվ գերածն ե, միայն թե տեղի հյուսվածքի
առանձնահատկության չնորհիվ սրանք ավելի քնքուշ
են, դունատ, մանր և անդեն աչքով այլ տեսք ու-
նեն: Գարհանային կատարրի բնորոշ հատկություններն
են. 1) Հիվանդությունը սկսվում ե մանուկ հասա-
կում (4-5 տարեկանից հետո) և տեղում ե յերբեմն
մինչեվ 20-25 տարեկանը կամ յերբեմն ել ավելի.
2) Հիվանդանում են մեծ մասամբ տղաները. 3) Հի-
վանդությունը խստանում ե դարնանը և նրանից հե-
տո ավելի տաք յեղանակներին, թուլանում ե հով
ամիսներին՝ սկսած աշնանից և կրկին վերականգ-
նում ե տաքերը սկսելուց. տարեց տարի հիվանդա-
գին յերելութները բարդանում են, արտահայտելի
դառնության վառ արևոտ որերին: Կարծրենու կոն-

յունկտիվան ևս դերաբյունում եւ դառնում և սկըսում եւ լուսավախություն : 4) Հաճախ կոսկերն ուժեղ քոր են դաշտ, հիվանդը բնադրմամբ տրորում եւ աչքերը և սաստկացնում դերաբյունությունը նորանոր դրգիռով :

Գարնանային կատարը մեղ մոտ ավելի հաճախ եպատահում քան հյուսիսում : Տրախոմայի դեմ պայքարողն այս հիվանդությունը պետք եւ լավ իմանա, վորպեսզի չխառնի տրախոմայի հետ :

Բուժումը .— Սպեցիֆիկ բուժում չունի . Բուժումն ուղղված է լինում քորի դեմ, վորի համար նշանակում են քացախաթթվուտի թույլ լուծույթի կաթիլներ (տես ը . № 23), իսկ դերաբյունության դեմ և յեթե միաժամանակ քիչ թե շատ արտադրուկ կա, ցինկում սուլֆուրիկումի թույլ լուծույթը խառնած աղբենալնի հետ (տես ը . № 19) . Խորհուրդ եւ տրվում գործածել ամպագույն հարթ ապակուց ակնոցներ (կոնսերվներ), լայն շրջանակով դիմարկ, արեվի ճառագայթներից պատշտանվելու համար : Այս բոլորն ինչպես ասացինք հիմնական միջոցներ չեն դարնանային կատարը դեմ : Վերջերս մեր կլինիկայում գործադրվում են դարնանային կատարը ժամանակ ձկան յուղի ներարկումներ, վորոնց արժամանակ ձկան յուղի դրական ե (տես ձկան յուղի ներարկումներ) :

ՈՏԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԿՈՆՅՈՒՆԿՏԻՎԱ, ՊԱՐԿՈՒՄ

Կոնյունկտիվալ սպարկը հաճախ են ստար մարմիններ ընկնում, ավագ, փոշի, ածուխ, քարի կտոր-

ներ, քամու հետ բերած մանը մժեղներ, դաշտային աշխատանքի ժամանակ քիստ, հատիկ, հարդի կտոր և այլն։ Ոտար մարմինների ուժեղ հարվածից կամ ճնշումից կոնյունկտիվայի վրա կարող են առաջանալ քերծվածքներ, պատովածքներ, կամ թե միայն իրենց ներկայությամբ ուժեղ դրվում են աչքը և առաջացնում դերարյունություն, զգալի ցավեր, արցունքահոսություն, բլեֆարոսպազմ։ Ուշադրավ ե այն, վոր յերեմն հիվանդն ոտար մարմնի ներկայություն և զղում կոնյունկտիվալ պարկում այն ժամանակ, յերբ այնտեղ կա միայն աննշան քերծվածք առաջացած արդեն դուրս ընկած ոտար մարմնից։

Բուժումը. — Վորպեսպի կոնյունկտիվալ պարկի զննման ժամանակ ցավերը չսաստկանան ու հիվանդը ընազդմամբ չընդդիմանա քննության, անհրաժեշտ ե նախաղեռ կաթեցնել կոնյունկտիվալ պարկը 1-2 կաթել նովոկայինի լուծույթ (տես ը. №10)։ Մի շաբաթ անց շրջել կոպերը, բացել անցածալքը և հայտարքերված ոտար մարմինը փորձել ստերիլ խոնավ բամբակով, կամ հականեխած պինցետով, կամ ոտար մարմինը հեռացնելու դործիքով հեռացնել ու աչքը կաթեցնել 3%-ային կոլլարդով՝ հականեխած նպատակով։

Պետք ե ասել, վոր մինչեւ որս ել յերեմն դյուղերում ընդունված պառավական միջոց ե ոտար մարմինը աչքից հեռացնել լեղվով. պետք ե խստիվ արգելել այդ, և պայքարել նրա դեմ այն պարզ պատճառով, վոր լորձաթաղանթը հեշտությամբ կարող ե վարակվել լիզովի միջոցով զանազան հիվանդություններով։

ԱԶՔԻ ՍԿՐՈՓՈՒԿՅՈՒՆ ՀԵՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Այս հիվանդությունը հաճախակի կրկնողություններով ունենում էն այն յերեխաները, վորոնք տառապում են դալասուխայով. այն է՝ թարախահոսություն ականջից, դլխին խոցեր, վզին դեղձերի գետած, որգանիզմի թույլ կաղմություն և այլն. Սկրոֆուլյուզից առաջանում են կոնյունկտիվի, լիմփի և յեղջերենու վրա հանդույցներ, վորոնք քայքայվելով վերածվում են խոցերի: Խոցերը յեթե կարծրենու կոնյունկտիվի վրա յեն, անցնում են անհետ, իսկ յեթե յեղջերենու վրա յեն, կարող են տալ սոլիներ, վորոնք ժողովրդական լեզվով կոչվում են հատ՝ սոլիտակ, խիտ կամ նոսր: Հիվանդության արտահայտություններն են բլեֆարոսպազմ, լուսավախություն, արցունքահոսություն, ցավ. Հիվանդ յերեխաները հաճախ խուսափելով լույսից, արելից, ծածկում են աչքերը, թաղնվում են սենյակի մութ անկյուններում, ընկրծմում են վլուխը յերեսն ի վար բարձի մեջ, վորպեսպի աղատվեն լույսից, ճառաղայթներից: Յերբ փորձում եք հետ տանել կոպերը, առատ արցունքը հոսում և աչքերից, իսկ յեղջերենու վրա յերեվում են մեկ կամ մի քանի սպիտակ մանր հատեր, իսկ կոպերը արտաշրջելիս կոնյունկտիվիտի յերեվույթներ:

Վորովհետեւ սկրոֆուլյոզն որդանիզմի ընհանուր հիվանդագին արտահայտությունն ե, ուստի և բնական է, վոր որդանիզմի ընդհանուր դրությունը բարելավելով աչքեց ևս անհետանում են հիվանդագին յերեսույթները: Այս պատճառով ել աչքի սկրոֆու-

լող հիվանդությունների ժամանակ բուժումը բացի
աչքից պետք է ուղղված լինի նաև որդանիզմի ընդհա-
նուր սկրոֆուլոզ այլ յերևույթների դեմ ևս : Այս նպա-
տակով հիվանդին պետք է ուղղել բժշկի մոտ և վար-
վել նրա ցուցմունքներով . իսկ բժշկի բացակայության
դեպքում նշանակել լավ սնունդ , մաքուր ող , արև ,
ծովեղբյա ողափոխություն , ձկան յուղի գործածում :
Զափաղանց լավ են անդրադասում ձկան յուղի նե-
րարկումներն որական մեկ անդամ 1,0 վոքքերին , 2,0
մեծերին նստելատեղին , ներմկանային (տ . եջ 100) :

Տեղային բուժում .—Աչքի լվացումներ ոքսիցիանա-
տի լուծույթով (տես ը . № 8) . կոպի կոնյունկտի-
վայի վրա տեղի ունեցող յերեսույթների դեմ
խարում 2 0/0 -ային արգենտում նիտրիկումի լուծույ-
թով և ապա 1 0/0 -ային աղաջրով լվացում , վորից
հետո ոճել դեղին սնդիկի 1 0/0 -ային ոճանելիքով
(տես ը . № 6) : Ուժեղ լուսավախության դեպքում
գործածել մուգ կոնսերվիներ :

ՊՏԵՐԻԳԻՈՒՄ ԿԱՄ ԹԵՂԱՆՄԱՆ ՓԱՌ

Սա կոնյունկտիվայի մի ծալք և յեռանկյունաձև ,
վորի դադաթն ուղղված է դեպի յեղջերենին , իսկ
մարմինը լայնանալով անհետանում է կոնյունկտիվա-
յի մեջ : Աճելով դադաթի ուղղությունով , յեղջերե-
նու յեղբից աստիճանաբար տարածվում է դեպի նր-
ար կենտրոնը և յերբ հասնում է բիբի սահմաններին ,
տեսողությունը թուլանում է :

Թեվանման փառը յերբեմն լինում է դերաբյունած :
Պտերիգիումը լինում է հասակավոր մարդկանց մոտ .

նրա շարժառիթներն են անընդհատ քամու ազդեցությունը, նրա մեջ պարունակող գաղերը. նա մեծ մասամբ լինում է աչքի ներսի մասում, բայց պատահում է և դրսից. նրա միակ բուժումը ուղերացիան է:

ԿՈՆՅՈՒՆԿՏԻՎԱՅԻ ԱՅՐՎԱԾՔՆԵՐ

Կոնյունկտիվայի այրվածքները կարող են առաջանալ թթվուտներից, հիմքից, կրից, քիմիական մատիտից, չիկացած մետաղից, յեռացող ջրից և այլն: Այրվածքներից կարող են առաջնանալ կուպի և կարծրենու կոնյունկտիվայի միջև կապումներ, վորոնք հնարավորություն չեն տալիս յերբեմն աչքը կանոնավոր բացվելուն, կամ սահմանափակում. են նրա շարժումները:

Բուժումը.— 1) Թթվուտների այրվածքի դեպում կատարել հաճախակի լվացումներ սոդայի թույլ լուծույթներով:

2) Կրով այրվելուց լվանալ ուղղ ջրով:

3) Ալկալի դեպում կաթեցնել կաթ:

4) Քիմիական մատիտի այրվածքի դեպում գործածել $10\%_0$ -ային տանինի լուծույթ (տես ը. № 24):

Յերբ այրվածքները նոր են, այսինքն յերբ հիվանդը յեկել է աչքի այրվելուց մի քանի որ հետո և արդեն թարախահոսություն ունի, նախքան վորեե մի դեղով բուժելը անհրաժեշտ է աչքը առատ լվանալ բիվանոլի 1:1000-ի մեջ լուծույթով (տ. ը. № 25), մաքրել թարախից և ոծել ստերիլ ամերիկական վաղելինով:

ԴԱԿՐԻՈՑԻՍՏԻԾ ԿԱՄ ԱՐՏԱՍՎԱԿՊԱՐԿԻ ՔՐՈՆԻԿ
ԲՈՐԲՈՒԺՈՒՄ

Արտասվաքթային խողովակի նեղանալու պատճառով արցունքը կուտակվում է պարկի մեջ, տարրալուծվում և դրվում լորձաթաղանթը, յերբ այս պայմաններում արցունքապարկն են ներխուժում դանազան հիվանդաբեր մանրեներ, պարկում առաջանում ե թարախոտ բորբոքում, վորը կոչվում է դակրիոցիստիս :

Դակրիոցիստիտը ամենից հաճախ առաջանում է անելմուկոկկից կամ ստաֆիլիկոկկից, նա քրոնիկ հիվանդություն է : Հայտաբերվում է արցունքապարկը սեղմելուց դուրս հոսող թարախով, կոնյունկտիվայի հիպերեմիայով կամ կոնյունկտիվիտով և յերբեմն նաև բլեֆարիտով :

Բուժումը . դակրիոցիստիտը դեղորայքով չի բուժվում . փորձում են դոնդով արցունքաքթային անցքը լայնացնել, բուժել լվացումներով, բայց մեծ մասամբ ապարդյուն . դակրիոցիստիտի միակ բուժումը ուղերացիան է :

Զափազանց վտանգավոր է դակրիոցիստիտը, յերբ յեղերենու վրա առաջանում են քերծվածքներ . պարկից դուրս հոսող թարախը յուր պարունակող մանրեներով կարող է վարակել քերծվածքը, առաջացնել խոց, վորը մեծ մասամբ լինում է անբուժելի և հացնում է աչքը բացարձակ կուրության : Դակրիոցիստիտը յերբեմն տրախոմայի բարդությունն է, դակրիոցիստիտի առկայության դեպքում տրախոմայի էիմ պայքարողը պետք է կարողանա հայտաբերել նրան, և հիվանդին ուղարկել մասնադիտական բուժման — աչքը կուրանալու վտանգից ազատելու համար :

ՅԵՂՋԵՐԵՆՈՒԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմալ յեղջերենին թափանցիկ է , անդույն , հարթ , փայլուն , ահանոթ զգայուն . յեղջերենու հիվանդությունների ժամանակ խախտվում են նրա այս հատկություններից մեկը , մի քանիսը , կամ բոլորը . սրանց հետևանքն է լինում յեղջերենու կազմակիրությունը , իսկ արդյունքը տեսողաւթյան սրության թուլանալը կամ նույնիսկ կուրությունը :

ՈՏԱՐ ՄԱՐՄԻՆԵՐ ՅԵՂՋԵՐԵՆՈՒԻ ՎՐԱ

Հաճախ են յեղջերենու վրա ընկնում կամ խրվում նրա մեջ ստար մարմիններ . քարի , ածուխի , զանազան մետաղների մանրուք . նրանք բոլորն ել , թեկուզ և լինեն ամենաանշան մեծության , խրվում են յեղջերենին , կամ քերծում մակերսը , առաջացնում են ցավ , արցունքահոսություն , լուսավախություն , կոնցունկտիվայի գերարնություն , իսկ վոր ամենապլիսավորն ե , յերբեմն իրենց հետ միասին ներա տանելով : Կամ այն մանրեներն առաջացնում են յեղջերենու բորբքում , խոց :

Ստար մարմնի ներկայությունը յեղջերենու վրա յերբեմն հիվանդը ձշորեն վորոշում է , նամանավանդ յերբեմն հիվանդը վորոշում է ընկած աչքը . բայց պատահում ե նաև յերբ հիվանդը վոչ զգում , վոչ ել յենթաղրում ե վոր աչքում ստար մարմին կա : Յերբ կասկած կա , վոր աչքում կարող ե ոտար մարմին լինել և հիվանդը ցավից դժվարությամբ ե բացում աչքը , հարկավոր ե նովոկայինի կամ կոկայինի լուծույթով թմրեցնել աչքը , վորից հետո հիվանդը հանգիստ բացում ե աչքը

և առանց լնդդիմանալու թույլ և տավիս քննել ու
հայտաբերել ոտար մարմինը:

Հաճախ ոտար մարմնի փոքրության պատճառով
անհրաժեշտ է զինում քննել հիվանդին կողմնային
լույսով. սրա համար մութ սենյակում հիվանդը նըս-
տում է քննողի դիմաց, վորը կողքից, խոշորացույ-
ցով ճրագի լույսի ճառագայթներն ուղղում է յեղ-
ջերենու վրա և նրա լուսավորված մակերեսին հայ-
տարերում և ոտար մարմինը:

Ոտար մարմինը հեռացվում է հետեյալ կերպով.
կրկին անդամ նույն նովոկայինի կամ կոկայինի լու-
ծույթով թմրեցնել աչքը, անցկացնել կոպելայնիչը,
իսկ ով վարժված է, առանց նրան, ձախ ձեռքով ֆիկ-
սել լայն բացած աչքի կոսկերը, հիվանդի հայացքն
ուղղել մի կետի և առաջտրկել անթարթ նայել, ոտար
մարմինն ավելի լավ նշմարվող ուղղությամբ: Աջ ձեռ-
քով թեք, դեպի ոտար մարմինը մոտեցնել հականեխ-
ված գործիքը, վորը կոչվում է ոտար մարմիններ հե-
ռացնելու գործիք, և այն շարժել, ինչպես ամանից
զգալով ճաշի վերցնելը՝ և այլպիսով յեղջերենու
վրայից հեռացնել ոտար մարմինը: Անհրաժեշտ է հա-
տուկ ուշադրությամբ հետեւ յերկու մոմենտի՝ 1)
պատվիրել հիվանդին ոտար մարմինը հեռացնելուց
և վոչ մի դեպքում չչարժվել. ամենաաննշան ցնցումն
անդամ կարող է գործիքով քերծել յեղջերենին:
2) Այդ գործողությունն անհրաժեշտ է կատարել չա-
փաղանց մաքուր, սրա համար հարկավոր է գործիքը
կանոնավոր հականեխել սպիրտով կամ յեռացնել ջը-
րում, և վերջապես 3-րդ, ոտար մարմինը հեռացնե-
լուց հետո անողայման աչքը կաթեցնել կոլարգոլի

ՑՅ-ային լուծույթ (տես ը. № 15) հականեխման
նպատակով։

Այն դեպքում, յերբ ոտար մարմինը չի խրվել, այլ
միայն նստել է յեղջերենու վրա, նպատակահարմար և
լվանալ աչքը հականեխիչ լուծույթով, կամ սրբել
թեթև շարժումով նույն լուծույթով թրջած ստերիլ
բամբակով։ յերբ այս յերկու ձեռք հնարավոր չլինի
հեռացնել ոտար մարմինը, այն ժամանակ անհրաժեշտ
է հեռացնել դործիքով։

ՅԵՂՋԵՐԵՆՈՒ ԲՈՐԲՈԳՈՒՄԸ ԿԱՄ ԿԵՐԱՏԻՑ

Յեղջերենու բորբոքումը կոչվում է կերատիտ։ կե-
րատիտի ժամանակ խախտվում են յեղջերենու նորմալ
հատկությունները, նրա վրա առաջանում ե տարած-
ված կամ սահմանափակ պղտորում, վորը կոչվում է
ինֆիլտրատ։ կարող են դոյանալ անոթներ, մակերե-
սը քայքայվել, առաջանալ խոցեղ, պատել թարախով,
կորցնել զղայնությունը, կամ դառնալ դերդայուն։

Պարտադիր չե, վոր այս հիվանդագին յերևույթնե-
րը բոլորը միասին անպայման արտահայտված լինեն
կերատիտի ժամանակ։ բայց յեթե լինի յեղջերենու
վրա այս յերեսույթներից մեկը կամ մե քանիսը, դա
արդեն կնշանակե վոր յեղջերենին բորբոքված է, վոր
նա տառապում է կերատիտով։

Մակերեսային կերատիտ։—Յերբ բորբոքումը պա-
տում է միայն յեղջերենու վերնաշերտը, առաջացնե-
լով պղտորումներ՝ ինֆիլտրատ, անոթներ, լուսավա-
խություն, արցունքահոսություն, ցավ, թթվարոս-
պազմ, կոչվում է մակերեսային կերատիտ։ Յեղջե-

ըենու ինֆիլտրատով՝ պատաժ վայրը դառնում է անհարթ, յերբեմն քայքայվում է, առաջանում է խոց. թեթև դեպքերում ինֆիլտրատը ներծծվում է. անոթներն անհետանում են. խոցն առողջանում է առանց հետք թողնելու կամ թողնում է այս կամ այն մեծության սպիտակ «հատ» այսինքն սպիտեր:

Յեղջերենու խոց. — Կերատիտի մի արտահայտությունն է խոցը. նա յեղջերենու ծանր հիվանդությունն է, վորը մեծ մասամբ վերջանում է կամ ուժեղ արտահայտված սպիտվ՝ հատով, կամ ավելի վատ՝ աչքի ամբողջական կազմափոխությունով ու կուրացումով: Ծավալվելով որ որի վրա նա տարածվում է թե մակերեսով և թե խորությունով. բորբոքային յերկույթներն անցնում են ծիածանին. առաջանում է ծիածանի կալումներ յեղջերենու հետեւ պատին, թարախ (հիպոպիոն) առաջային կամերայում կամ խոցը պատռվում է, ծիածանը արտափրկվում է ներակնային ճնշման ազդեցության տակ, կամ ճըմըլվում է պատռվածքի արանքում: Արտափրկումն ընդհանրապես շուտ կանդ չի առնում: Յերբեմն աստիճանաբար մեծանալով նա սլուռկի նման ցցվում է, աչքն այլանդակվում ու յերբեմն բացարձակ կուրանում: Յեղջերենին թուլացած ու քայքայումից նըմվագած, ճնշումից աստիճանաբար ամբողջապես դուրս է ցցվում, իր հետ ձգելով ծիածանը և այսպիսով առաջանում է ստաֆիլոմա: Շատ հաճախ ստաֆիլոման այնքան մեծ է լինում, վոր չի տեղավորվում կոպերի տակ, այլ այլանդակորեն դուրս է ցցվում նրանց արանքից, թեկող կոպերը փակելիս:

Յեղջերենու խոցն առաջանում է՝ 1) քերծվածքնե-

սից մեծ մասսամբ վարակվելով ստար մարմնի հետ
ներխուժած վորեե մի մանրեյով, 2) կոպերի վրա տե-
ղի ունեցող վորեե հիվանդությունից վրապես նրա
ըարդությունը, որինակ, բևենորսեալից: Ընդհանուր
հիվանդություններից՝ պնեվմոնիայի, մալարիայի,
պաղագրայի, թոքախտի, սիֆիլիսի, ռեվմատիզմի
ժամանակ յերբեմն առաջանում էն նույնուն կերա-
տիտներ, բայց վոչ խոցավոր:

Յերբեք յեղջերենու մակերեսային բորբոքումից հե-
տո հետք չի մնում նրա վրա, հյուսվածքն վերականգնվըն
վում է, լույսի ճառագայթները վերսափն կանոնավոր
թափանցում են աչքը. բայց մեծ մասսամբ լորբոքու-
մը վերջանալուց հետո յեղջերենու վրա մնում է ան-
ջնջելի հետք, խորթուբորբություն, անհարթու-
թյուն, մանր ու մեծ խիտ կամ նոսր սպիներ: Սպինե-
րը յեղջերենու հյուսվածքի կազմափոխությունն են.
ըստ խոռության բաժանվում են յերեք կարգի՝ 1. ան-
ջմարելի անզեն աչքով, վորոնք հայտաբերվում են
միայն մութ սենյակում կողմնային լույսով—կոչ-
վում են ՆՈՒԲԵԿՈՒԼԱՅ: 2. Ամողանման նոսր, վորոնց
միջով թափանցում է ծիածանը—տեսանելի սովորա-
կան լույսով, կոչվում է ՄԱԿՈՒԼԱՅ. և վերջապես 3-րդ
չափաղանց խիտ, միանդամայն սոլիտակ, կոչվում է
ԼԵՑԿՈՄԱՅ: Յերբ լեյկոմայի հետ առաջանում են ծի-
ածանի կողումները յեղջերենու հետեւ սլատին, կոչ-
վում է ԼԵՑԿՈՄԱՅ. ԱԴՀԵԲԵՆԱՅ:

Յեղջերենու այս բոլոր կազմափոխություններն անդ-
րադառնում են տեսողության վրա՝ վորքան նրանք խիտ
են, մեծ տարածված յեղջերենու կենտրոնական մա-

սի վրա, այնքան ամելի յե թուլանում տեսողությունը, յերբ յեղջերենին ամբողջապես և պղտորած, տեսողությունը ծայր աստիճան ընկնում, հասնում եւ լուսադդացման և ընդհակառակը, յերբ պղտորումը տարածված է միայն յեղջերենու ծայրամասում, տեսողությունը խանգարվում է մասնակի, կամ բոլորովին չի խանգարվում:

ԿԵՐԱՏԻՑԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Յերբ քերծված է միայն սահմանափակ կերպով յեղջերենու վերնաշերտը և ուժեղ ցավ և պատճառում, կաթեցնել ցինկի, նովոկայինի լուծույթ, ապա կոնյունկտիվալ պարկը դնել քսերոֆորմ և խինինի ոծանելիք և կապել ստերիլ փաթաթով. շուտով ցավերն անհետանում են, եպիթելը վերականգնվում է, աչքի առողջանում :

Մակերեսային կերատիտի ժամանակ գործածել քըսերոֆորմի, կամ խինինի, կամ յերկուսը միատեղ պատրաստած ոծանելիք :

Խոցի ժամանակ, յերբ նա թարախոտ է, հականելին ոխիանովի, ոքսիցիանատի լուծույթով, մաքրել հիղբողենիում հիպերօքիդասումի առատ կաթիլներով (ը. № 8, 25, 26) ապա ոծել քսերոֆորմի ոծանելիքով: Խոցը մաքրվելուց հետո, յերբ այլևս թարախարտադրություն չկա, ինֆիլտրատը (պղտորումը) ներծծելու համար գործածել գեղին սնողիկի 10/0-ային ոծանելիք. իսկ յեթե խոցի մակերեսը դեռևս անհարթ է և անփայլ, նախքան դեղին սնդիկի ոծանելիքը գործածել խինինի ոծանելիք յեղջերենու եպիթելը վերա-

կանգնելու նպատակով։ (Եպիթելի վերականգնումը հայտաբերվում է հյուսվածքի փայլի վերականգնումով։

Յերբ կերատիտների ժամանակ առաջացել ե նաև ծխածանի գերարնությունը, վորը հայտաբերվում է նրա պղտորումով, կամ առաջացել է ծխածանի բորբոքումը, անհրաժեշտ է դործածել նաև ոծանելիքից առաջ 10%-ային ատրոպինի կաթիլիք, վորով բիբը լայնանում է ու կանխվում ծխածանի բորբոքումը (տես ը. № 29)։

ՏՐԱԽՈՄԱ.

Տրախոման կոնյունկտիվալ պարկի և յեղջերենու ծանր ու քայքայիչ հիվանդությունն ե։ Կուրություն առաջացնող հիվանդությունների շարքում նա առաջին տեղն է բռնում, վորպես վարակիչ հիվանդություն նա հայտնի յեր դեռևս 2000 տարի մեզանից առաջ։ Յերբեմն նա կրել է համաճարակային բնույթինչպես որինակ 18-րդ դարում Յեղիսլուսում, Նապոլեոնի արշավանքներից հետո։ Մեզ մոտ տրախոման անցյալի ծանր սոցիալ-տնտեսական պայմանների արդյունքն ու ժառանդությունն ե։

Տրախոման սկսվում է կոսղի կոնյունկտիվայի վրա, կամ սուր կոնյունկտիվիտի յերեռոյթներով, կամ թե չե այնքան աննկատելի, վոր յերկար ժամանակ մընում է հիվանդի համար անզգալի։ Առաջին դեպքում նա զուղորդում է մեծ մասամբ սուր կոնյունկտիվիտին, վորի ներկայությունն ապացուցվում է արտադրուկի քսուկի քննությունով։ 2-րդ դեպքում

կոնյունկտիվիտը բացակայում է և տրախոմայի արա-
տահայտությունն այս դեպքում լինում է մեծ ժամ-
սամբ թույլ:

Այն դեպքում, յերբ տրախոման դուգորդվում է
սուր կոնյունկտիվիտով, կոնյունկտիվան յենթարկ-
վում է ուժեղ հիպերիմիայի, հաստանում է, կոպե-
րը քիչ թե շատ այտում են, արտադրուկի քանակն
աճում է, առաջանում է թարախ, արցունքահոսու-
թյուն, լուսավախություն, կոնյունկտիվալ պարկում
զգացվում է յերբեմն հողի, մոխրի, ավաղի, մի խոս-
քով ոտար մարմնի ներկայություն:

Ինչպես արդեն հայտնի յէ, սուր կոնյունկտիվիտի
յերեռյթները 15-20 որից հետո աստիճանաբար մեղ-
մանում է, մինչդեռ տրախոմայի ժամանակ հիվան-
դության պատկերը քանի զնում բարդանում է, անցա-
ծալքի կոնյունկտիվայի վրա առաջանում են հատիկ-
ներ, վորոնք կոչվում են ֆուլիկուլներ: Հատիկները
կամ ֆուլիկուլները լինում են զնդանե, տարբեր մե-
ծության, գորշ կարմիր, պղտոր, անկանոն դասա-
վորված. տարածված սկզբում գիսավորապես վերին
կոպի անցածալքի վրա, իսկ հետագայում ամբողջ
կոպի կոնյունկտիվայի վրա: Կոնյունկտիվան դառ-
նում է թափշանման, վորովհետեւ նրա վրայի պտկիկ-
ները գերաճում են. պտկիկների դերաճն ավելի յե
արտահայտված, նամանավանդ աճառի վերին սահ-
մաններում. յերբ տրախոման ավելի յե հնանում,
հաճախ անցածալքի ֆուլիկուլները միաձուլվում են,
կորցնում իրենց հատիկաձեւ տեսքը: Տարբեր չափով են
արտահայտվում ֆուլիկուլները, կամ պտկիկները.
յերբեմն ուժեղ են արտահայտվում ֆուլիկուլները,

այլ զեպքերում պտկիկները . մեկի կամ մյուսի ուժեղ
արտահայտության համաձայն տրախոման ել կոչ-
վում է պտկիկավոր կամ հատիկավոր (այսինքն Փոլ-
լիկուլյար) : Պատահում է նաև , վոր յերկու յերեսութ-
ներն ել համաշափ ուժեղ են լինում արտահայտված :
Կոպի վրա տրախոման տելվում է տարիներ , կամ
նույնիսկ տասնյակ տարիներ , յերբ մահավանդ նա
մնում է առանց բուժման : Փոլիկուլների կամ պըտ-
կիկների ուժեղ աճման ժամանակաշրջանը կոչվում է
տրախոմայի գերարյունության շրջան . վորոշ ժամա-
նակից հետո Փոլիկուլները սկսվում են ճեղքվել կամ
ներծծվել և նրանց աստիճանաբար փոխարինում են
փոքր , քնքուշ , դունատ սպիները , ցիրու ու ցան տա-
րածված կոնյունկտիվայի վրա ամեն կողմ : Այդ ժա-
մանակից սկսած կոնյունկտիվան սկսում է կամաց
կամաց դունատվել , բարակել , և տարիներ անցած
յերբ Փոլիկուլները մեծ քանակությամբ անհետանում
են ճեղքվելով կամ ներծծվելով , դունատ հյուսված-
քի վրա մնում են միայն ել ավելի դունատ սպիները .
սպիները շատանալով սղմում են , փոքրացնում են
կոնյունկտիվալ պարկը , իսկ անցածալքը ժամանակի
ընթացքում համարյա անհետանում է :

Այս շրջանում հաճախ կոնյունկտիվալ պարկում
կոպի և աչքի կոնյունկտիվայի միջև առաջանում են
կպումներ , նրանք նկատելի արտահայտված են լի-
նում ցածի կոպի վրա , մատով վերջինս ուժեղ հեռ
ձգելիս : Կոպի կոնյունկտիվայի այս կազմափոխու-
թյուններով տրախոման չի վերջանում . նա ընդգր-
կում է կոպի ավելի խորը շերտերը : Ապացուցված է ,

վոր Փոլիկուլներն աճում են նաև կոպի խորը շերտերում. այստեղից հիվանդությունը տարածվում է նաև կոճիկի վրա, վորը սկզբում հաստանում է, իսկ հետո սպիացման պատճառով ծամովում, իր հետ ձըդելով նաև սպիացած կոնյունկտիվան. այս պատճառով կոպն ամրողապես ծովում է դեպի ներս, դեպի աչքը:

Ֆոլիկուլների սպիներին վոխարինվելը ակում է յերկար. կոնյունկտիվայի մի վայրում սպիներ են առաջանում, մի այլ տեղում դեռևս նորն աճում. այս դրությունը շարունակվում է մինչև այն ժամանակ, յերբ Փոլիկուլներն այլքս չեն աճում և կոնյունկտիվան բացարձակ պատռմ է Փոլիկուլներին վոխարինված սպիներով: Հիվանդության այս ընթացքի համաձայն տրախոման կոպերի վրա կարելի յէ բաժանել յերեք շրջանների:

1-ին շրջանը բնութաղբյուր է կոնյունկտիվայի քիչ թե շատ հաստացումով, ֆոլիկուլների զարգացումով, մեծ մասամբ անցածալքում և աճառային մասի անկյուններում, պտկիկների սահմանափակ աճով: Յեթե տրախոման զուլորդվում է սուր կոնյունկտիվիտով, ապա սկզբի շրջանում արտահայտված են լինում նաև սուր կոնյունկտիվիտի յերեռութները՝ դերարնություն, այտուց, կոպերի ծանրություն, յերբեմն կոպերի քընոտ դրություն (վերին կոպի զգալի իջվածք), ցավ, ոտար մարմնի զգացում, սկզբում արցունքահոսություն, ապա սահմանափակ արտադրուկ:

2-րդ շրջանը բնութաղբյուր է կոնյունկտիվայի սաժեղ դերաճով, մեծ քանակությամբ Փոլիկուլներով արտահայտված պտկիկներով, ուժեղ արտադրուկով.

այս շրջանում արդեն տեղ տեղ նկատելի յեն Փոլիկ-
կուների ճեղքվելուց հետո առաջացած սպիները:

Յ-րդ շրջանը բնութագրվում է գերակշռող սպիների
քանակով, տեղ-տեղ նկատվող Փոլիկուներով, այ-
սինքն սպիների քանակն ավելի շատ ե, քան Փոլի-
կուների քանակը և սրա հետ միատեղ կոպի կոնյունկ-
տիվայի վրա դեռևս նկատելի յեն բորբոքային յե-
րեվույթները, արտադրուկի քանակն այս շրջանում
համեմատորեն քիչ եւ:

ՏՐԱԽՈՄԱՆ ԱԶՔԻ ՎՐԱ.

Կոպի կոնյունկտիվայից տրախոման անցնում ե
կարծրենու կոնյունկտիվայի վրա, սակայն վերջինիս
հյուսվածքի կաղմության առանձնահատկության պատ-
ճառով տրախոման այստեղ ուժեղ չի արտահայտվում.
նա լնութագրվում ե միայն կոնյունկտիվայի գերար-
նությունով և չափազանց բացառիկ դեպքերում
միայն հատ-հատ Փոլիկուներով. բայց տարիների
ընթացքում կոնյունկտիվան այստեղ դառնում է չա-
փազանց փուխր, քիչ թե շատ հաստացած և անոթ-
ներով պատած: Այսպիսով տրախոման ընդգրկում ե
ամբողջ կոնյունկտիվալ պարկը: Ինչ կերպ ել արտա-
հայտված լինի տրախոման կոնյունկտիվալ պարկի
վրա, վորքան ել կազմափոխված լինի հյուծվածքը,
այնուամենայնիվ այդ անմիջականորեն չի անդրադառ-
նա տեսողության վրա: Սակայն քիչ ե պատահում,
վոր տրախոման սահմանափակվի միայն կոնյունկտի-
վալ պարկի վրա, նա մեծ մասամբ տարածվում ե նաև

յեղջերենու վրա և այս պատճառով տրախոման հանդիսանում և աչքի ծանր և կուրացուցիչ հիվանդություն :

ՏՐԱԽՈՄԱՆ ՅԵՂՋԵՐԵՆՈՒ ՎՐԱ, ԿԱՄ ՊԱՆՆՈՒՍ

Լիմբի մոտ, մեծ մասամբ յեղջերենու վերին յեղը րում արտահայտվում են կետաձև պղտորումներ, վորոնք աստիճանաբար միաձուլվելով ընդզրկում են յեղջերենու առողջ յեղը, կամաց կամաց տարածվելով վերից վար, դեպի յեղջերենու կենտրոնական մասը. սրան զուգորդվում են նոր զոյացած անոթները, վորոնք սկզբում փոքր են, անդեն աչքով հաճախ անշմարելի. յերբ դեռևս ակնհայտի պաննուս չկա, հաճախ հնարավոր ե լինում մութ սենյակում կողմնային լույսով նկատել բաղմաթիվ մանր անոթներ, տարածված լիմբի և կոնյունկտիվայի վրա. այդ անոթները նորմալ ժամանակ չեն լինում. սրանք սկսվող պաննուսի արտահայտությունն են: Պաննուսի առաջանալուց անոթներն աճում են, ճյուղավորվում, ցանցի նման տարածվում յեղջերենու ինֆիլտրատի վրա ու ընթանում առաջ:

Տարածվելով, պաննուսը յերբեմն պատում է ամրող յեղջերենին. յերբ պաննուսը չափազանց հաստ է, ուժեղ կարմրած, պատած բաղմաթիվ խիտ անոթներով, մսանման, կարմիր, կոչվում է մսակալած պաննուս, կամ պաննուս կրասսուս, իսկ յերբ նա ավելի թույլ և արտահայտված, նա անվանվում է պաննուս տենուսիս, կամ բարակ պաննուս: Պաննուսի աճին զուղընթաց տեսողությունը թուլանում է. վորքան նա մոտենում է

յեղջերենու կենտրոնական մասին, այնքան ավելի
նվազ ե դառնում տեսողությունը. յերբ ամբողջապես
ե պատում յեղջերենին, յերբեմն տեսողությունը չա-
փազանց թուլանալով հասնում ե միայն լուսաղղաց-
ման և հիվանդը վաստորեն դործնականապես կուրա-
նում է:

Պահնուսը յեղջերենու մակերեսային տարածուն
բորբոքումն ե անոթներով պատաժ։ Տրախոմայով
հիվանդների 70 տոկոսից ավելին տառապում ե պահ-
նուսով։ Յերբ պահնուսը բուժվում է, այսինքն յերբ
յեղջերենու վրայից ինֆիլտրատն ու անոթները ներ-
ծըծվում են, յեղջերենու վրա մնում են անզեն աչքով
մեծ մասամբ ահտեսանելի խորդուրդություններ,
վորոնք անգրադառնում են տեսողության սրության
վրա. հաճախ պահնուսը մի քանի անդամ ե կրկըն-
վում և ամեն անդամ կրկնվելուց հետո յեղջերենու
մակերեսը դառնում ե ել ավելի անհարթ և տե-
սողության սրությունը յուրաքանչյուր կրկնողությու-
նից հետո ավելի յե թուլանում. իսկ յերբ պահնուսը
դառնում ե մսակալած, այլևս հնարավորություն
չի լինում վերականգնել տեսողությունը և կուրու-
թյունը դառնում ե անխուսափելի։ Այսպիսով թե տե-
սողությունը վորքան կվերականգնվի պահնուսից հե-
տո, կախված ե նրանից՝ կկրկնվի՞ արդյոք դարձյալ
պահնուսը թե վոչ և թե ինչ աստիճան ուժեղ ու խորն
ե յեղել տվյալ բորբոքման ժամանակ առաջացած քայ-
քայումը, կազմակոխությունը։ Քանի դեռ կոպերի
վրա տրախոման շարունակում ե յուր քայքայիչ դոր-

ծը, վոչնչով չի կարելի յերաշխավորել պահնուսի չը...
կըրկնվելը — հիվանդության վատթարագույն մոմենտն
ե այս . ուստի և անհրաժեշտ ե բացի պահնուսի բու-
ժումից հիմնական ուշադրությունը դարձնել կոպի
կոնյունկտիվայի տրախումատող բորբոքման վրա մի-
այն այն ժամանակի, յերբ կոպի կոնյունկտիվան ազատ-
վում ե տրախումայի բորբոքային յերեսութներից,
յերբ կոպի կոնյունկտիվան պատաժ ե միայն սպինե-
րով, այդ դեպքում միայն կարելի յե առել, վոր պահ-
նուսը բուժելուց հետո դարձյալ չի կը կնվի:

Պահնուսն առաջանում ե յերկու ճանապարհով՝
1) կամ կարծրենու կոնյունկտիվայից անմիջապես տա-
րածվելով յեղջերենու վրա, կամ 2) խորդ ու
բորդ դարձած, ծումոված կոպի կոնյունկտիվան՝ ան-
ընդհատ տրորելով յեղջերենուն, նրա վրա առաջաց-
նում ե քերծվածքներ, ուր և տարածվում ե տրախո-
մայի վարակը պահնուսի արտահայտությունով կամ
յեղջերենու տրախումատող խոցով։

ՅԵՂՋԵՐԵՆՈՒ ՏՐԱԽՈՄԱՏՈԳ ԽՈՑ

Տրախումայի 2-րդ բարդությունն ե յեղջերենու խո-
ցը։ Պահնուսին զուղորդվելով, կամ անկախ նրանից
կոպի տրախումայի ժամանակ կարող ե առաջանալ
յեղջերենու տրախումատող խոցը։ Խոցը նույնպես պա-
տում ե ինֆիլտրատով, զդալի յե դառնում ցավը,
արցունքահոսությունը, ուժեղ լուսավախությունը և
տեսողության թուլությունը, վորի չափը կախված է
նրանից, թե վորտեղ ե գտնվում խոցը, յեթե նա

կենտրոնանում և բիբլ սահմաններում, այսինքն յեղ-
ջերենու կենտրոնական մասում, հապա տեսողությունը
շատ ե թուլանում, իսկ յեթե հեռու յե կենտրոնից,
տեսողությունը քիչ ե թուլանում:

Հաջող դեպքում խոցի և նրա շուրջը տարածված
ինֆիլտրատը ներծծվում է, հիվանդությունը վերջա-
նում է, յեղջերենու վրա խոցի վայրում առաջանե-
լով մեծ կամ փոքր, խիտ կամ նոսր սպի, վորը կախ-
ված է խոցի մեծությունից և խորությունից: Բայց
պատահում են դեպքեր, յերբ խոցը քայքայում է յեղ-
ջերենու բոլոր շերտերը, թարախակալում, առաջա-
նում է թարախոտ խոցին հատուկ բոլոր բարդություն-
ները և հիվանդությունը վերջանում է աչքի բացար-
ձակ կուրությունով:

ՏՐԱԽՈՄԱՅԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1) Ենտրոպիոն— Յերբ կոպի կոնյունկտիվայի և
կոճիկի վրա սպիներ են առաջանում և կոպն ամբող-
ջապես ծովում ե դեպի ներս— կոչվում ե ենտրոպիոն:

2) Տրիխիազ— Արտեվանունքների, մազարմատների
շրջանում, տրախոմայից առաջացած կազմակիրու-
թյան պատճառով արտեվանունքները ծովում են դեպի
աչքը, սնընդհատ տրորում յեղջերենին, առաջացնում
քերծվածներ և տարածելով տրախոմայի վարակը
յեղջերենու վրա, առաջացնում պաննուս: Կոպի յեղ-
ջի այս հիվանդությունը կոչվում է տրիխիազ:
Տրիխիազը սովորաբար հանդիսանում է ենտրոպիոնի
սկիզբը և մեծ մասամբ զուգորդվում է նրան:

Տրիխիազից դեպի աչք ծոված արտեվանունքները

հանում են հատուկ պինդետով, վորպես ժամանակա-
վոր ոժանդակություն, իսկ հիմնական բուժման հա-
մար թե ենտրոպիոնի և թե տրիխիազի ժամանակ հի-
վանդին ուղղել մասնագետի մոտ հատուկ սովերացիոն
բուժման :

3. Սիմբլեֆարոն— Աչքի և կոպի կոնյունկտիվայի
արանքում տրախոմայի ժամանակ տեղ-տեղ առաջա-
նում են կպումներ, վորոնք սահմանափակում են աչ-
քի շարժումները. այս կպումները լավ են արտահայտ-
վում ներքեմի կոպը ձգելիս նրանք կոչվում են ՍիՄԲ-
ԼԵՖԱՐՈՆ. բուժումը պահանջում է հատուկ ոպերա-
ցիա :

4. Յերեմին տրախոմայի թարախն արտասվատար
ուղիներով ներխուժելով արտասվապարկը, առաջաց-
նում է պարկի թարախոտ բորբոքում, այսինքն ԴԱԿ-
ՐԻՈՑԻՍՏԻԾ, այս դեպքում հիվանդին պետք է ու-
ղարկել բուժման մասնագետի մոտ :

5. Բլեֆարոֆիմոզ— Կոպի դրսի անկոյունի մաշկը
անընդհատ թրջվելով տրախոմայի արտադրուկով, յեր-
բեմն խոցոտում է. խոցիկների աւողջանալուց հետո
առաջանում են սպիներ. սրանցից կոպերը կարծանում
են, ձգվում, աչքի բացվածքը փոքրանում. այս դրու-
թյունը կոչվում է ԲԼԵՖԱՐՈՑԻՄՈԶ. կոպերը դըժ-
վարությամբ են շրջվում, նրանց արանքում, կոնյունկ-
տիվալ պարկում կուտակվում են արտադրուկը և դըժ-
վարացնում կոպերի բուժումը. կոպերն ավելի սեղմ են
լինում նստած աչքի վրա. աչքը բաց ու խուփ անե-
լիս անընդհատ տրորում են յեղջերենին և առաջաց-
նում յերեմն պաննուս, իսկ այն դեպքում, յերբ աչ-
քը արդեն տառապում է պաննուսով, բլեֆարոֆիմոզն

արագացնում և պահնուսի ընթացքը, դժվարացնում
բուժումը:

6. Քսերոփքալմ— Տրախոմայի ամենածանր բար-
դություններից մեկն և քսերոփթալմը. սա առաջա-
նում է տրախոմայի վերջին շրջանում, այն ժամանակ,
յերբ կոպի կոնյունկտիվան յենթարկված և ուժեղ ըս-
պիացման, վասկված են նրա վրա բացվող դեղձերի
ծորանները, աչքը զրկվել և անընդհատ թարմանալու
հատկությունից և յենթարկվել չորացման: Սրանից
յեղձերենին որ որի վրա կազմափոխվում է ու պատում
անթափանցիկ սպիտակ ու չոր շերտով՝ տեսողաթյու-
նը աստիճանաբար թուլանում է, հասնում բացարձակ
կուրության: Տրախոմայի այս ծանր բարկությունը
հաճախ և պատահում մանավանդ այն վայրերում,
ուր ընդհանուր առմամբ պայքարը տրախոմայի դեմ
թուր, և աղել և հիվանդները ուսուրությունը տարիներով
մնացել են առանց բուժման:

ՏՐԱԽՈՄԱՅԻ ԲՆՈՒՅԹԸ

Միևնույն հիվանդությունը ամենքի նկատմամբ
նույն ընթացքն ու հետևանքը չեն ունենում: Տարբեր
մարդիկ տարբեր կերպով են տանում նույն հիվանդու-
թյունը. այսպես որինակ, բծավոր տիֆով միաժման-
ակ տառապով յերկու հիվանդ նույնանման պայման-
ներում բուժվելիս առանձին, առանձին վերցրած հի-
վանդության տարբեր արտահայտություն ու ընթացք
են ունենում. մեկը աստիճանաբար լավանում է, մը-
յուսը ընդհակառակը, կամ յերկարատե ու ծանր հի-
վանդանալուց հետո և միայն առողջանում, կամ մա-
հանում է:

Այս յիշելույթի պատճառները բազմաթիվ են. սակաւած և հիվանդի տարիքից, որդանիզմի ամրությունից, առանձին որդանների առողջությունից ու ընդդիմաղիր ուժից, սննդից, աշխատանքի բնույթից, ռողբելու, վայրի կլիմայական ուսումնաներից, աշխարհաղբական դիրքից, հիվանդի ժառանգական առանձնահատկություններից, կրած հիվանդություններից և այլ բազմաթիվ մոմենտներից, վորոնցից յուրաքանչյուրն իրեն հերթին դրական կամ բացասական կերպով և անդրադառնում տվյալ հիվանդի վրա, նպաստավոր կամ աննողաստ դեր կատարում որդանիզմին հաղթող հանդիսանալու, կամ հաղթվելու պատճառ դառնում: Այսպիսով ուրեմն հիվանդության դեմ պայքարելու դործում ամբողջական որդանիզմը մէծ դեր և կատարում:

Բացասություն չի կազմում այս խնդրում նաև որախոման, տրախոմայով տառապելիս ևս որդանիզմի բոլոր հատկություններն անդրադառնում են հիվանդության ընթացքի ու վախճանի վրա: Այս և պատճառը, վոր յերբ հիվանդներից վոմանք տարիներ տառապելով տրախոմայով նույնիսկ չեն զդում իրենց հիվանդ լինելը, ու տրախոման սահմանափակվում է միայն նրանց կոսկի կոնյունկտիվայի վրա, սպիներ առաջացնելով, մի այլ զեսքում ընդհակառակը, կարծ ժամանակում կոսկերից տրախոման անցնում է յեղջերենու վրա բարդություններ և առաջանում է հիվանդն առողջանում և միայն յերկարատե, համառ բուժումից հետո, կամ նույնիսկ չնայած ձեռք առած բոլոր միջոցառումներին յերթեմն կուրանում են: Ովկ կարողացավ ավելի մանրամասն ուսումնասիրել բոլոր

այն պայմանները, վորոնց առկայությամբ ընթանում է տվյալ դեպքում տրախոման, նաև ի վիճակի կլինի ավելի լավ պայքարելու տրախոմայի դեմ և բուժելուց լավ արդյունքների հասնելու.— տրախոմայի դեմ պայքարող յուրաքանչյուրի համար այս բանն իմանալն անհրաժեշտ է:

ՏՐԱԽՈՄԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄՈՏ

Վորովէնետե մանուկների կոնյունկտիվան ավելի նուրբ ե, ավելի դյուրագրդիո, ուստի և վարակ ընդունելու տեսակետից ավելի մատչելի, քան մեծերինը։ Միաժամանակ հաճախ մանուկների անկարողությունը պահանջվող սանմինիմումը պահպանելու, դարձնում են դյուրին տրախոման մանուկների մեջ ավելի հեշտ և ավելի չուտ տարածվելու, քան մեծերի մեջ։ Սակայն, սրան հակառակ, մանուկների տրախոման ավելի հեշտությամբ ե բուժվում քան մեծերինը և բարդություններ ավելի քիչ ե տալիս, քան մեծահասակների տրախոման։

Տրախոմայի վարակիչ լինելն անժիտելի իհաստ ե. յեթե կենցաղային և հակասանիտարարական վատ պայմաններում ապրող ընտանիքում մեկը տառապում ե տրախոմայով, մյուսների վարակվելը դառնում ե անխուսափելի։ Վարակողը հիվանդ աչքի արտադրուկն ե, ֆուլիկուլների բովանդակությունը՝ այդ ապացուցվում ե այն վաստով, վոր յերբեմն ֆուլիկուլների անզգուշ արտաձնշման ժամանակ նրանց բաղադրությունից մի կաթիլ ընկնելով բժշկի աչքը— վարակում է վերջինիս տրախոմայով. բացառիկ չեն դեպքերը, յերբ տրախոմայի վարակիչ լինելուն համողվելու հա-

մար մարդիկ վարակել են իրենց գիտակցաբար, կոնյունկտիվալ պարկը տանելով տրախոմայով հիվանդի աչքի արտադրուկը:

Տրախոման ևս ուրիշ վարակիչ հիվանդությունների նման յուր դադանի շրջանն ունի. այսինքն վարակվելուց հետո մինչեւ նրա արտահայտվելը տեղում և վորոշ ժամանակամիջոց— մոտավորապես 10-15 որ։ Թե վորն ե տրախոմայի հարուցիչը, գիտությունը գեռևս վերջնականապես չի պարզել. հայանուրեն այն պատճառով, վոր նա չափազանց մանր ե, ինչպես արտահայտվում են մանրադիտակի տակ չհայտնաբերվելու պատճառով, անդրմանբազիտակային ե (ույլտրամիկրոսկոպային ե)։

Տրախոման վարակիչ ե այնքան ժամանակ յերբ գեռևս կոսկի կոնյունկտիվան բացարձակ սպիտական չի յենթարկվել, յերբ դեռ արտադրուկ կա, թեկուզ աննշան քանակությունով և յերբ դեռ քիչ թե շատ մնացել են բորբոքային յերեռույթները. այս ե պատճառը, վոր վարակումը հեշտությամբ ե տեղի ունենում նույն սրբիչով, անկողնով, չորեղենով, մի խոսքով այն ամենի միջոցով, ինչ ձեռք ե տալիս հիվանդն անմաքուր ձեռներով և ապա ոգտագործում ե առողջը։ Փոքր դեր չեն խաղում վարակման գործում նաև ճանճերը։

ՃՐԱԽՈՒՄԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Յերբ հայտնի յե վարակիչ հիվանդության հարուցիչը, բուժման իմաստն այն ե, վոր որպանիզմից արմատախիլ անվի տվյալ հիվանդության հարուցիչը, բայց

յերբ անհայտ և հիվանդության հարուցիչը, այդ անել անկարելի յեւ և բուժումն այդ դեպքում վերածվում է ողաքարի հիվանդադին յերեսույթների դիմ:

Ասացինք, վոր տրախոմայի հարուցիչը վերջնականական հայտնաբերված չեւ, ուստի և նրա բուժումը վերածվում է կոպի և աչքի առջևի հատվածի վըրա տեղի ունեցող հիվանդադին յերեսույթների դեմ պայքարելուն. այլ խսոքով տրախոմայի բուժումն ուղղված է կոնյունկտիվայի արտադրուկի ու թարախի դեմ, ֆուլիկուլների ու պտկիկների վերածի դեմ, կոպերի հաստացման դեմ և ընդհանրապես այն բարդությունների դեմ, վորոնք տեղի յեն ունենալու տրախոմայի ժամանակ:


Սա յեւ պատճառը, վոր տրախոմայի բուժման համար առաջարկված են բաղմաթիվ միջոցներ՝ դեղորայքով, մեքենայական, խիլուրզիական, ֆիզիոթերապետիկ:

Այդ բոլորից նկարագրելու յենք միայն այն, ինչ դորձնականպես դյուրին և, մատչելի և հնարավոր տրախոմայի դեմ պայքարողի համար:

Կոպերի բուժումը— Առաջին հերթին բուժումը պետք է ուղղված լինի արտադրուկի, թարախի դեմ, վորն ամենից շատ և տրախոմայի առաջին և յերկրորդ շրջաններում, նամանավանդ յերբ նա դուդորդ վում է վորեւ սուր կոնյունկտիվիտի հետ:

Պետք է յերկու տոկոսային արգենտում նիտրիկումի (տես ը. № 12) լուծույթով խարել կոնյունկտիվան և ապա լվանալ 10/0-ային աղաջրով— որական մեկ անգամ, ճշշտ այնպես, ինչպես այդ կա-

տարվում ե սուր կոնյունկտիվիտների ժամանակ։ Արդենտում նիտրիկումի գործածումը վերջացնում է արտադրուկը, կամ հասցնում նրան մինիմալ չափերի, վորին և պետք ե ձղտել։ Նույնիսկ տրախոմայի Յ-բղշանում, յերբ հիվանդը անհամեմատ ավելի քիչ և դանդասովում թարախակալումից, յեթե նա առաջին անդամն ե այցելում բուժման, նպատակահարմար ե մի քանի որ այդ ձևով կոնյունկտիվան բուժել և ա-



Նկ. 4. Տրախոմատող ֆոլիկուլների արտաճնշման պինցետներ պա միայն անցնել ուրիշ բուժման։ Ձպետք ե ի չարը գործադրել արդենտում նիտրիկումի գործածումը յիրկարատե կերպով, նրանից կոնյունկտիվան անուղղելի սեվանում ե ստացվում ե այսպես կոչված արդիբոզ։

Յերբ արտադրուկը, թարախիլ զգալի չափով պակասեց, նկատելի յել լինում նաև բորբոքային յերեւույթների վորոշ թեթևություն. ծանրացած կողերն ավելի հեշտ են բացվում, աչքի կարմրությունն ըդգալիորեն սպակում ե, հիվանդը նկատելի թեթեվություն ե զգում. թարախի, արտադրուկի սպակուելուց կամ վերանալուց հետո, պետք ե աշխատել վոչնչացնել ֆուլիկուները, թեկուզ ինչ քանակի ել նրանք լինեն. յեթե ֆուլիկուների անհետացումն ինքնահոսի մատնվի, նրանք դեռևս յերկար կմնան կոնյունկտիվայի վրա և կբարդացնեն տրախոմայի յերևույթները. այս պատճառով ել անհրաժեշտ ե նրանց արտաձնչել, վորով զդալի կերպով կրճատվում ե հիվանդության առմրող ընթացքը: Արտաճնշումը կատարվում ե հատուկ սլինցետով (տես նկար № 4) հետեւյալ կերպով: Հիվանդին առաջարկել լվացվել. ապա աչքը կաթեցնել 1-2 կաթիլ 2 օ/օ-ային նովոկային կամ կոկային, լվանալ արտաշրջած կոսկերը ոքսիցի-անատի լուծույթով (տես ը. № 8). անցածալքի մեջ ներարկել 1,0 20օ/օ-ային նովոկայինի ստերիլ լուծույթ, ներարկման ժամանակ ասեղը բռնել կոսկին զուգահեռ. և սրսկումը կատարել անցածալքի յերկայնությամբ. ներարկումը թմրեցնում ե կոնյունկտիվան և միաժամանակ նպաստում ե անցածալքի դլանաձև արտափրմանը, վորն արտաճնշման համար չափազանց նը-պաստավոր և դյուրին ե դարձնում աշխատունիքը:

Սրսկումից 2-3 րոպե անց արտաշրջել նախ վերին կոպը. ոգնողը ցուցամատով թեքում ե ցածի վոչ շրջած կոպը, աշխատելով նրանով միաժամանակ ծած-

կել ակնագունդը, վորպեսզի արտաճնշման ժամանակ դործիքը չ'դիպչի յեղջերենուն։ Յերկտակ ծալած կոնյունկտիվան բռնելով հատուկ պինցետի բերանների արանքում, պետք ե կատարել այն շարժումը, ինչ կատարում ե կովկիթը մատներով կթելու պրոցեսում— պտուկների նկատմամբ։ դործիքի այդ ձևով շարժման ընթացքում նրա արանքն են ընկնում Փուլիկուլները, ճեղքվում և արտաճնշվում ե նրանց բովանդակությունը։ արտաճնշման ընթացքում ոգնողն անընդհատ բամբակի խոնալ գնդիկներով չորացնում ե կոնյունկտիվան արյունախառն արտադրուկից և հնարավորություն ե տալիս ուշադրությամբ արտաճնշելու մնացած Փուլիկուլները։ Հաճախ հարկավոր ե լինում մեկ պինցետով բռնել ու բարձրացնել կոնյունկտիվայի ծալքը, իսկ մյուսով նկարադրած ձևով արտաճնշում կատարել նաև անցածալքի ավելի խորը շերտների վրա։ Արտաճնշման ժամանակ պինցետով կարիք չկա չափաղանց ուժեղ կճմտել, այլ պետք ե սեղմել մեայն այնքան, վոր պինցետի բերանում Փուլիկուլները ճեղքվեն և յեթե մեկ անդամով չեն ճեղքվում, կրկնել նույնը մի քանի անդամ։ Վերջացնելով վերին կոպի Փուլիկուլների արտաճնշումը, նույնը պետք ե կատարել ներքենի կոպի վրա։

Նովոկայինի ներարկումը դյուրություն ե տալիս համարյա առանց ցավ պատճառելու կատարել արտաճնշումը։ Արտաճնշումը նպատակահարմար ե կատարել հիվանդին կանոնավոր պառկեցնելով և սավանով ծածկելով բացի գլխից, վորը համապատասխան կերպով պառկեցնելով, բաց պահե-

լով միայն արտաճնչման յենթակա աչքը : Արտաճնչումից ուժեղ սեղմելու պատճառով յերբեմն կոպերն այտում են . դրա համար ել արտաճնչումը կատարելուց հետո հիվանդին տրվում է լվանալու և թրջուկներ անելու համար 20/0-ային բորաթթվուտի լուծույթ կամ ոքսիցիանատի լուծույթ (տես ը . № 20 № 8) :

Մեծ մասամբ արտաճնչելուց հետո 2-րդ և 3-րդ որերը կոպերը դեռևս այտած են լինում , ուստի և այդ ժամանակամիջոցում բավականանում են աչքը կաթեցնելով որական մեկ յերկու անդամ ոլրոտարգով լուծույթ (տես ը . № 14) :

Զպետք ե յենթադրել , վոր մեկ անդամ արտաճնչում կատարելուց հետո ֆուլիկուլներ չեն դոյանա այլիս . քանի դեռ կոնյունկտիվայի վրա կան աղատ վայրեր , դեռևս ֆուլիկուլներն առաջանալու յեն . արտաճնչումն շոտակեցնում է միայն տվյալ ֆուլիկուլների վախճանը և այդպիսով նպաստում տրախոմայի լնթացքի արագացմանը : Հաճախ կարիք ե լինում արտաճնչումը մի քանի անդամ կրկնել , յերբ վերստին առաջանում են նորանոր ֆուլիկուլներ :

Ֆուլիկուլներն արտաճնչելուց հետո հատկապես ուշադրություն դարձնել հաստացած ու բորբոքված կոնյունկտիվայի վրա , վորն անհրաժեշտ է ներծծման յենթարկել : Սրա համար ոլետք ե դործադրել պղնձարձասպ . նա ուժեղացնում է արյան շրջանառությունը , և նպաստում է հաստացած կոնյունկտիվայի ներծծմանը . յենթադրում են , վոր պղնձարձասպը վոչնչացնում է միաժամանակ նաև տրախոմայի հարուցիչն . վոչինչ վորոշակի սրա մասին ասել չի կարելի , բայց

պղնձարջասպը յուր դրական աղղեցության պատճառով վաղուց ընդունված և հաճախակի գործածական դեղանյութ է. տրախոմայի ժամանակ գործածվում է հետեւյալ կերպով. շրջած վերին կոպի տակ անց և կացվում պղնձարջասպի մատիտը և թեթեւվակի նրանով իսկ բարձրացնելով կոպը, վորպեսզի չքսվի աչքին և չայրի, քսում են կոնյունկտիվայի խորը շերտերին, հասցնելով ծայրը մինչև անցածալքը: Ներքեւ կոպը լրիվ բացվում է հետ ձկելով, ուստի և նրա կոնյունկտիվային հեշտությամբ կարելի յե քըսել արջասպը: Արջասպը քսելիս յերբեմն ցավ է պատճառում, վորից խուսափելու համար պետք է նախքան նրա քսելը մեկ յերկու կաթիլ նովոկայինի կամ կոկայինի լուծույթ կաթեցնել կոնյունկտիվալ պղարկը, իսկ քսելուց հետո բորաթթվուածի լուծույթով կամ ջրով լվանալ շրջած կոպերը: Բացի պղնձարջասպի մատիտից նույն նպատակով կարելի յե գործադրել նաև պղնձարջասպի, կուպրում ցիտրիկումի, հիդրագիրում ֆլավումի (դեղին սնդիկի) ոծանելիք այն ժամանակ յերբ արտաճնչումից հետո կատարեային յերեւույթները տեղին յեն տվել և յերբ արտադրուկ համարյա չկա:

Ֆոլիկուլները գոյանում են վոչ միայն կոնյունկտիվայի մակերեսին այլև ընդհանրապես կոպի ավելի խորը շերտերում են. այս ի նկատի ունենալով, արտաճնչումից հետո նպատակահարմար և փոխանակ արջասպի մատիտի գործադրումը ձեռնարկել մի այնպիսի միջոց, վոր թե նպաստի հաստացած կոնյունկտիվայի ներծծմանը և թե ուղղված լինի կոպի ներսի

շերտերում, աչքի համար անտեսանելի, գոյացող ֆոլ-
իկուլների վոչնչացման դեմ: Դրա համար ամենից
նպաւտակահարմարն եւ արտաճնչումից հետո կողի մա-
սաժը, վորեւ մի ներծծող դեղանյութով, որինակ
նույն կուլրսուլֆուլիկումի, կուպրում ցիտրիկումի,
դեղին սնդիկի ոծանելիքներով (տես ը. № 30 № 31
№ 6), այս ոծանելիքներով մասաժը մի կողմից նպաս-
տում եւ խորանիստ ֆոլիկուլների վոչնչացմանը, իսկ
մյուս կողմից հաստացած կոնյունկտիվայի ներծծմա-
նը:

ՄԱՍԱԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԶԵՎԸ

- 1) Կոնյունկտիվան թմրեցնել մի քանի կաթիլ նո-
վոկայինի լուծույթով (տես ը. № 10):
- 2) Զախ ձեռքի մեջ և ցուցամատով վերեկի կոպը
քիչ առաջ քաշել աչքից:

- 3) Ապակյա թիակիկի ծայրին դնել ճկույթ մատի
յեղունգի կիսի չափ առաջարկված ոծանելիքներից
վորեւ մեկը, ներս տանել զգուշույթյամբ բարձրացրած
կոպի տակ, մինչ անցածալքը, թիակով թեթև բարձ-
րացնել կոպը, վորպեսզի թիակիկը չքսվի աչքին,
ձախ ձեռքի ցուցամատը հենել կոպին դրսից մաշկի
վրայից, ներսում գտնվող թիակիկին, վերջինս
շարժել կոպի մի անկյունից դեպի մյուսը հորիզոնա-
կան ուղղույթյամբ, աշխատելով թիակիկի մակերեսով
հարել, տրորել կոնյունկտիվան այնքան, վոր դուրս
հոսող արցունքը դառնա արյունախառն (ուժեղ ճնշում
չ՝ գործադրել թիակիկը չկոտրվելու համար, վորից կա-
րող են բարդություններ առաջանալ): Նույն դործո-

դությունը կատարել և ցածի կոպի վրա, ուր մասաժն
ավելի դյուրին և կատարելը:

Մասաժն ավելի հեշտ և կատարել ոծանելիքում
թաթախած ամուր սղմած ստերիլ բամբակի գնդիկով,
բռնած յերեք մատների՝ արանքում, վորով շիում են
չրջած կոպերը. բայց սրանով վերին կոպի անցածալ-
քը չի ընդդրկվում, ուստի և ամենից նպատակահար-
մար և մասաժը կատարել ապակյա թիակիկով վերը
հիշած ձեռվ:

Յեթե կոպերն ուժեղ չեն դրզովում, հապա մա-
սաժը կարելի յե կատարել ամեն որ. հակառակ զեպ-
քում՝ որ մեջ: Մասաժի դրական աղեցությունը
նկատելի յե լինում հենց սկզբից. աստիճանաբար կոն-
յունկտիվան բարակում ե, հիվանդագին զգացումներն
անհետանում են, հիվանդը դյուրությամբ և բանում
աչքերը, նայում լույսին: Յերբեմն կոպերն այնքան
արագորեն են լավանում, վոր կարճ ժամանակից հե-
տո հիվանդն աղատվելով ծանր դրությունից, յենթադ-
րում ե, թե միանդամայն առողջ ե և նույնիսկ խու-
սակում ե կանոնավոր բուժումը շարունակելուց:
Բորբոքային յերևույթների անհետանալուց հետո ել
դեռ յերկար ժամանակ կարիք կա մասաժը շարունա-
կելու մոտ մեկ ամիս, վորից հետո ժամանակավոր
դադարեցնելով բուժումը, հարկավոր ե հետեւ մերթ
ընդ մերթ կոպերի դրությանը և կարիքի դեպքում
նույնը կրկնել:

Յեղջերենու այլ հիվանդությունների, ինչպես և պաննուսի ժամանակ յերբեմն բորբոքվում է նաև ծիածաննը. այս ի նկատի ունենալով պաննուսի ժամանակ հաճախ նպատակահարմար է դործածել $10/0$ -ային առողջինի լուծույթ (տես ը. № 29) բիբլ լայնացնելու նպատակով, վորով և նախազգուշացվում է ծիածանի բորբոքումը: (Առրողինի դործածումն անվտանգ է յերիտասարդների համար, իսկ հասակավորների նըկատմամբ անհրաժեշտ է ասրողինը դործածել միայն բժշկի թույլավությամբ, վորովհետեւ ասրողինը բարձրացնում է ներքակնային ճնշումը, իսկ սա կարող է վտանգ սպառնալ հասակավորի տեսողությանը, առաջացնելով վլասուկոմա կոչված կուրացուցիչ հիվանդությունը):

Յերբեմն կոպերի կոնյունկտիվայի բուժումն ըստ ինքյան նպաստում է պաննուսի ներծծմանը. բայց յեթե կոնյունկտիվայի բուժման հենց առաջին որից պաննուսի նկատմամբ տարբերություն չի նկատվում, ապա անհրաժեշտ է առանձին բուժել նաև պաննուսը: Հատկապես միայն պաննուսն է բուժվում նաև միայն այն ժամանակ յերբ կոնյունկտիվայի վրա տրախոմայի հիվանդագին պրոցեսը վերջացած է:

Պաննուսը նույն տրախոման է, միայն վորովհետեւ յեղջերենին ավելի նուրբ և քնքուշ թաղանթ է, ուստի և նրա վրա տրախոմայի պատկերն այլ է. այս պատճառով ել տարբեր և նաև նրա բուժումը կոնյունկտիվայի բուժումից:

Պահնուածի ժամանակ պետք է կաթեցնել աչքը պը-
ղընձարջասապի կաթիլներ (տես ը. № 32)։ Յերբ յեղ-
ջերենին դյուրագրդիո ե, ցավոտ և արջասապի կաթիլ-
ները ցավ են պատճառում, պետք է նրա մեջ ավելաց-
նել նաև նովոկային (տես ը. № 33)։

Այս կաթիլներին կարելի յէ փոխարինել պղնձար-
ջասապի կամ կուսլրում ցիւրիկումի ոծանելիքը (տես
ը. № 30, № 31)։ Ոծանելիքի առավելությունը կա-
թիլներից այն է, վոր նա ներգործում է յերկարատե։

Յեղջերենու ինֆիլտրատի ներծծման նպատակով
գործածվում է մեկ տոկոսային դեղին սնդիկի ոծա-
նելիք (տես ը. № 6), 2—3 տոկոսային դիոնինի կա-
թիլներ, կամ այս յերկուսի խառնուրդն ոծանելիքի
մեջ (տես ը. № 34, № 35)։ Միաժամանակ ծիածանի
վրա յեղած գրդուի դեմ ևս ազդելու նպատակով գոր-
ծածվում է միատեղ դեղին սնդիկի հետ պատրաստած
ատրոպինի և դիօնինի ոծանելիքը (տես ը. № 36)
(զգուշ՝ հասակավորների նկատմամբ)։

Թեպետ և առաջարկված այս բոլոր միջոցները
լավ են ազդում պահնուածի ժամանակ, բայց քանի դեռ
կոսկերի կոնյունկտիվայի վրա զոյլություն ունի տրա-
խոման, պահնուածը կարող է կրկնվել. այս իսկ պատ-
ճառով պահնուածի բուժումը պետք է անպայման զու-
դորդել կոնյունկտիվայի բուժմանը, առանց հուսալու,
վոր միայն կոնյունկտիվայի բուժումով կբուժվի նաև
պահնուածը. իսկ յերբ կոսկի վրա տրախոմայի 4-րդ
շրջանն է, պահնուածի միայնակ բուժումը տալիս է կա-
յուն արդյունքներ։

Անհրաժեշտ և պահնուածի բուժումից առաջ և հետո

յուրաքանչյուր աչքի տեսողության սրությունը առանձին առանձին չափել . տեսողության լավացումը ցույց կտա գործնականապես նաև , վոր բուժումը տալիս եղական արդյունքներ :

ՅԵՂՋԵՐԵՆՈՒ ՏՐԱԽՈՄԱՏՈԶ ԽՈՑԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Հաճախ խոցի ժամանակ ցավն ու լուսավախությունը այն աստիճան են լինում արտահայտված , վոր նախ և առաջ կարիք են լինում ուշադրություն դարձնել սրա վրա , նշանակելով լուսավախության դեմ մուգ կոնսերվիներ , ցավի դեմ նովոկայինի և ցինկի միատեղ լուծույթ , կամ այս յերկուսը աղբենալինի հետ միասին (տես ը . № 18 , № 19) : Հատկապես խոցի դեմ զործածել կոլարդոլի քսերոֆորմի , բորաթթվուտի ոծանելիք , վորոնք գլխավորապես հականեխիչ դեր են կատարում (տես ը . № 37 , № 26) :

Յեթե խոցը մակերեսային է , բուժումը վերջացնելուց հետո յեղջերենու վրա մնում է մակուլա , իսկ յեթե խորանիստ ե՝ լեյկոմա : Յերբ խոցը գտնվում է յեղջերենու կենտրոնում՝ բուժումից հետո տեսողությունը շատ է թուլանում , յերբ ծայրամասում՝ քիչ : Պաննուսը կամ խոցը շատ հաճախ առաջանում են տըրախումայի այլ բարդություններից՝ ենտրոպիոնից , տրիխաղից , բլեֆարոֆիմոզից և այլն . ուստի և այդ դեպքերում բուժումը հիմնականում պետք է ուղղված լինի այդ բարդությունների դեմ . այս դեպքերում պահանջվում է խիրուրդիական բուժում , վորի համար հիվանդին պետք է ուղարկել մասնագետի մոտ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱԽՈՄԱՅԻՆ
ՄԱՍԻՆ

Տրախոման միանդամայն բուժելի յե յերբ նա տարածված և միայն կոպի կոնյունկտիվայի վրա, և հիվանդը ժամանակին դիմել է բուժման:

Յերբ յեղջերենու վրա առաջանում է պաննուս կամ խոց, տրախոման անդրադառնում է տեսողության սըրության վրա. յեթե բորբոքումն ընդդրկում է յեղջերենու կենտրոնական մասը, թեկուզ ամենաչնչին պղոտորումն անդամ կարող է ուժեղ կերպով անդրադառնալ տեսողության վրա. մինչդեռ յեղջերենու ծայրամասերի խոցը կամ նրանից առաջացած կազմակոխությունը՝ կամ ծայրամասում դժոնվող սկսնակ պաննուսը կարող են դեռևս չանդրադառնալ տեսողության վրա:

Վորքան շատ է կրկնվում պաննուսը կամ խոցը, այնքան ավելի յե բարդանում դրությունը, յեղջերենին ավելի յե կազմակոխուսում և տեսողության սըրություննը ավելի թուլանում:

Միամիտ հիվանդը լեյկոմայի կամ մակուլայի դեպքում դիմում է խնդրելով հեռացնել «հատը» վիրահատումով. բայց հատը սպի յե, նրան վերցնել, կտրել չի լինի, յեթե նա կտրվի, նրան կփոխարինի ավելի մեծ «հատ», այսինքն ավելի մեծ սպի, վորից տեսողությունն ել ավելի կթուլանա:

Յերբ պաննուսը կամ խոցը տեղի յե ունենում տրախոմայի վերջին շրջանում, հաջող բուժումից հե-

տո չի կրկնվում, վորովհետեւ բուժված կոպերը յեղ-
ջերենու նոր բորբոքման աղբյուր չեն հանդիսանում:

Վորքան ել բարդացած լինի տրախոման, այնու-
ամենայնիվ հիվանդին պետք է համոզել համառ կեր-
պով բուժել աչքերը, վորովհետեւ յեթե բուժելը գո-
նե կալահպանի ունեցած տեսողությունը, չբուժելը
նոր վտանդ է բացարձակ կուրացման համար:

ՏՐԱԽՈՄԱՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Տրախոման վարակիչ է, նրա վարակողը կոն-
յունկտիվալ պարկի արտադրուկն է, թարախը, արտա-
ճնշված ֆուլիկուլների բովանդակությունը. այս պատ-
ճառով թե բուժողը և թե բուժվողը կարելոր նշա-
նակություն պետք է տան մաքրության, ձեռների
կանոնավոր լվացման ու ամեն անդամ հիվանդ աչքե-
րը ձեռք տալուց հետո ձեռները հականեխելուն:

Աչքի այլ հիվանդություններին համեմատած ալ-
բախոման անցյալում արտահայոված է յեղել ամե-
նաբարձր ցուցանիշներով: Ակնարուժության մեջ չկա-
մի այլ հիվանդություն, վորն այնքան ցայտուն ար-
տահայտիչը լիներ անցյալի սոցիալ-տնտեսական ծա-
նըր պայմանների, ինչպիսին է տրախոման: Տրախո-
ման անցյալում անվանվել ե «աղքատների հիվանդու-
թյուն» այսինքն անմիջական արդյունքն աշխատան-
քի, կենցաղի, սննդի, կուլտուրական վատ ոլարման-
ների. այս պատճառով ել նա անցյալում անպատիժ-
ու բայց որեն տարածվել է մասսաւորի մեջ և կորո-
թյան հասցրել բաղմաթիվ մարդկանց: Միայն բուժու-

մը բավական չե տրախոման վերացնելու համար .
անհրաժեշտ է ձեռք առնել միջոցներ նորանոր հիվանդ-
ներ չունենալու համար . իսկ սրա միակ միջոցը տրա-
խոմայի դեմ նախաղղուշացման աշխատանքն է . այ-
սինքն առողջներին բացատրել, թե ինչպես, ինչ ճա-
նապարհով են մարդիկ վարակվում տրախոմայով,
ինչու յե անհրաժեշտ վարակվածից զգուշ լինել, նրա
շորեղենը, ամանեղենը, մի խոսքով այն ամենը ինչ
նա ձեռք է տալիս, առողջ մարդը ևս ձեռք տալուց
հետո պետք է լավ և մաքուր լվանա ձեռքերը . թե
ինչ նշանակություն ունի ամեն մարդու համար ա-
ռանձին սրբիչ, թաշկինակ, սպիտակեղեն, անկողին
ունենալը և թե ինչքան շատ դեպքեր կան, յերբ մե-
կը մյուսից վարակվում և ընդհանուր յերեսսրբիչ,
թաշկինակ, անկողին և այլն ունենալիս : Այս պատ-
ճառով ել զիտակցորեն զուդորդելով բուժումն ու
նախաղղուշացման աշխատանքները, տրախոմայի դեմ
պայքարի դործում կարող են մեծ հաջողությունների
հասնել : Միայն այս կերպ կարելի յե պայքարել տրա-
խոմայի դեմ :

ԻՆՉ ԳՈՐԾԻԲՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ ՏՐԱԽՈՄԱՅԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1.	Դեմարի կոպամբարձ	2	դուրս
2.	Կոպի լայնիչ	1	»
3.	Արտելանունքի պինցետ	1	»
4.	Անատոմիկ պինցետ	2	»
5.	Խիրուրգիական պինցետ	2	»
6.	Արտաճնշման պինցետ	4	»
7.	Մկրատ փոքր, ուղիղ	1	»
8.	Սկալպել	2	»
9.	Ասեղ ստար մարմինը հեռացնելու	1	հատ
10.	Կոնսերվներ	1	»
11.	Շպրիզ լյուերի 2,0	1	»
12.	Ասեղ շպրիզի համար	12	»
13.	Ապակյա թիակիկներ	50	»
14.	Պիպետկաներ	50	»
15.	Ցեղիկամաձև թաս	2	»
16.	Աետինե բալոն	2	»
17.	Ստերիլիզատոր	2	»
18.	Բիքս միջակ	2	»
19.	Տեսատախտակ	1	հատ
20.	Ցեղկուռուցիկ ապակի՝ 13,0 » » 20,0	2	»
21.	Կերոսինկա	1	»

ԴԵՂՈՐԱՅՔ ՅԵՎ ԴԵՂԱՏՈՄՄԵՐ

- № 1. Solut. Hydrargyri bichlorati $1,0:1000,0$.
- » 2. Solut. Acioli carbolici $3^{\circ}/_0—5^{\circ}/_0$
- » 3. Unguent. Acioli borici— $2^{\circ}/_0$
- » 4. Vaselini albi.
- » 5. Solut. $1\frac{1}{4}^{\circ}/_0$ Argent. Nitrici.
- » 6. Unguent. Hydrargyri praceipitati flavi $1^{\circ}/_0$.
- » 7. Rp. Brilliant gruni $0,1$.
Spiritи vini $70^{\circ}/_0—10,0$.
DS. Աղակյա ցուպիկի ծայրին փաթաթած
բամբակը թաթախել և զգուշությամբ քսել
կողի յեզրին արտեվանունքների արմատների մոտ:
- » 8. Rp. Solut. Hydrargyri oxcyanati $1,0:5000,0—300,0$
DS. Աչքի լվացումների համար:
- » 9. Rp. Solut. Hydrargyri bichlorati $1,0:10000,0—300,0$.
DS. Աչքի լվացումների համար:
- » 10. Solut. Novocaini $3^{\circ}/_0—10,0$.
DS. Աչքի կաթիլներ:
- » 11. Solut. Cocaini muriatici
 $2^{\circ}/_0—10,0$.
DS. Աչքի կաթիլներ:

№ 12. Solut. Argenti Nitrici

$2^0/0$ —10,0.

DS. Աչքի կաթիլներ:

» 13. Sol. Natri Chlorati $1^0/0$ —200,0.

DS. Խարումից հետո լվացումներ կատարելու
համար,

» 14. Rp Solut. Protargoli $6^0/0$ —10,0

DS Աչքի կաթիլներ:

» 15. Sol. Collargoli $3^0/0$ —10,0.

DS. Աչքի կաթիլներ:

» 16. Zinci sulfurici 0,05

Sol. Aciol. bocici $2^0/0$ —15,0.

DS. Աչքի կաթիլներ:

» 17. Rp. Solut. Zinci sulfurici $20^0/0$ —15,0.

Գործադրվում ե բժշկի ձեռքով կամ զհկա-
վարությամբ:

» 18. Zinci sulfurici 0,05

Novocaini—0,3

Sol. Aciol. borici. $2^0/0$ —15,0.

DS. Աչքի կաթիլներ:

» 19. Zinci sulfurici 0,05

Novocaini—0,3

Sol. Adrenalini 1,0:1000,0 gtt XV

Sol. Acid. borici $2^0/0$ —15,0

DS. Աչքի կաթիլներ:

» 20. Solut. Acid. borici $2^0/0$ —300,0.

DS. Սառը թրջուկների համար:

- № 21. Rp. Sol. Kali Hypermanganici
 $1,0:10000,0$
 DS. Ալացումների համար:
- » 22. Solut. Protargoli $10^0/0$ —10,0.
 DS. Աչքի կաթիլներ:
- » 23. Acid. Acetici gtt. II
 Ag. destil. 12,0
 DS. Աչքի կաթիլներ:
- » 24. Sol. Acid. Tannici
 $10^0/0$ —10,0.
 DS. Աչքի կաթիլներ:
- » 25. Sol Rivanoli
 $1,0:1000,0$ —100,0
 DS. Աչքը լվանալու լուծույթ:
- » 26. Xeruformi 0,3—0,5,0
 Vaselini american. 10,0.
 DS. Աչքի ոճանելիք:
- » 27. Chinini muriatici 0,1
 Vaselini american. 10,0.
 DS. Աչքի ոճանելիք:
- » 28. Rp. Chinini muriatici 0,1
 Xeroformi 0,3
 Vaselini american. 10,0.
 Mf. Unguent.
 DS. Աչքի ոճանելիք:

- № 29. Rp Solut. Atropini $1^{\circ}/_0$ —10,0.
 DS. Աչքի կաթիլներ: Հասակավորների նկատ-
 մամբ դործագրել բժշկի թույլատվությամբ:
 » 30. Cupri sulfurici 0,1
 . Vaselinei american 10, 0
 Mf. Unguent.
 DS. Աչքի սծանելիք:
 » 31. Cupri cytrici 0,3
 Vaselinei american 10,0
 Mf. Unguent.
 DS. Աչքի սծանելիք:
 » 32. Cupri sulfurici 0,1
 Glycorini 8,0.
 Ag. destil 10,0
 DS Աչքի կաթիլներ:
 » 33. Gupri sulfurici 0,1
 Novocaini 0,3
 glycerini 8,0.
 Ag. destil. 12,0
 DS. Աչքի կաթիլներ:
 » 34. Sol. Dionini $3^{\circ}/_0$ —10,0.
 DS Աչքի կաթիլներ:
 » 35. Hydrarg. pp. flavi, 0,1.
 Dionini 0,3
 Vaselinei americani 8,0
 Lanolini—2,0
 Mf. Unguent.
 DS Աչքի սծանելիք:

- № 36. Rp Hydrarg. pp, flavi 0,1.
 Atropinf sulfur 0,05
 Dionini 0,3
 Lanolini 2,0
 Vaselini amer ican 8.0
 Mf. Unguent. DS. Աչքի սծանելիք,

 » 37. Collargoli 0,3
 Vaselini american 10,0
 Mf. unguent, DS Աչքի սծանելիք,

 » 38. Acid, borici 0,2
 Vaselini american. 10,0
 Mf unguent, DS Աչքի սծանելիք,

 » 39. Cuprum sulfuricum
 Հղկած հատուկ մատիտ
 DS կռպի կռնյունկտիվային քսելու համար,

 » 40. Alumen
 Հղկած հատուկ մատիտ
 DS կռպի կռնյունկտիվային քսելու համար:

1. Ինչպես կատարել աչքի վանաները կատարվում են կամ հատուկ պատրաստված վանայով, կամ փոքրիկ բակալով, միայն վոչ սուր յեղբերով։ Ամանը դնել ափսեյի մեջ սեղանի վրա մինչև յեղբը լցրած հականեխիչ լուծույթով։ Աչքն ընկղմել ամանի մեջ այնպես, վոր կողերը հենվեն ամանի յեղբին և աչքը լողա հեղուկի մեջ։ Այդ գրությամբ աչքը շարժել զանազան կողմ 5-10 րոպե։ Կարիքի գեղքում լուծույթը փոխել 1-2 անգամ։ Լուծույթի տաքությունը պետք է լինի սենյակում պահած ջրի չերմաստիճանի։

2. Կարի ներարկում։ Ներարկման համար գործադրել ոռղջ կողի կաթ։ Եցնել 4-5,0 ապակյա փորձակալի մեջ թարմ կաթը, թեք պահել սովորովկայի բոցի վրա մինչ յեռալը։ Կրկնել այդ 3-4 անգամ։ Սրսկումը կատարել ներմկանային 2-3,0 գուլ կաթ։ Սրսկումից առաջ ներարկման վայրը կանոնավոր մաքրել սպիրտով թրջած բամբակով, խուսափել ասեղը յերակի մեջ խրելուց։ Ներարկումները կատարել 10-12 որ, որական 1 անգամ։

3. Զկան յուղի ներարկում։ Զկան յուղը քամել ձագարակ բամբակի միջով։ յուղը ամանով դնել ջրի մեջ, հականեխել 5 րոպե յեռացող ջրում։ Ներարկել ներմկանային նասելատեղի մկանների մեջ, որական 1 անգամ, մեծերին՝ 2,0, փոքրերին՝ 1,0։ Ներարկումների քանակը կարելի յե հասցնել 10-12-ի և կարիքի գեղքում կրկնել 15 որվա ընդմիջումից հետո։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերկու խոսք	3
Տեսողական որդանի անատոմիկ կազմության համա-	
ռոտ նկարագիրը	5
Կոպի կազմությունը դրսից դեպի ներս	7
Աչքը	11
Տեսաներվի պտկիկը, տեսաներվը և դեղին բիծը	16
Աչքի սնունդը	19
Աչքի ներլավվորումը	20
Աչքի տեսողական ընդունակությունը	20
Ինչպես շափել տեսողությունը	22
Աչքի առջևի հատվածի հիվանդություններ	24
Կոպի հիվանդություններ	25
Կոպի յեղբի հիվանդություններ	29
Կոպի ջարովածքներ, պատովածքներ և այլ-	
վածքներ	33
Կոնյունկտիվայի կամ շաղկապենու հիվանդություն-	
ներ	34
Ինչպես արտաշրջել կոպերը	35
Կոնյունկտիվիտ	37
Սուր կոնյունկտիվիտի բուժումն ու պրոֆիլակ-	
տիկան	39
Բլեննորբեա	47
Կոնյունկտիվայի ֆուլիկուլյոդ և ֆուլիկուլյար	
կատարը	51
Գարնանային կատարը	52

Ատար մարմիններ կոնյունկտիվալ պարկում	54
Աչքի սկրոֆուլյոզ հիվանդություն	56
Պտերիդիում կամ թեվանման վառ	57
Կոնյունկտիվայի այրվածքներ	58
Դակրիոցիստիտ կամ արտասվապարկի քոնիկ	
բորբոքում	59
Յեղջերենու հիվանդություններ	60
Ոտար մարմիններ յեղջերենու վրա	60
Յեղջերենու բորբոքումը կամ կերատիտ	62
Կերատիտի բուժումը	65
Տրախոմա	66
Տրախոման աչքի վրա	70
Տրախոման յեղջերենու վրա, կամ պանիսու	71
Յեղջերենու տրախոմատող խոց	73
Տրախոմայի բարդությունները	74
Տրախոմայի բնույթը	76
Տրախոման մանուկ հասակում	78
Տախոմայի բուժումը	79
Մասսաժ կատարելու ձևը	86
Պանիսուի բուժումը	88
Յեղջերենու տրախոմատող խոցի բուժումը	90
Ընդհանուր տեղեկություններ տրախոմայի մա-	
սին	91
Տրախոմայի պրոֆիլակտիկան	92
Դեղորայք և գեղատոմսեր	95
Ինչպես կատարել աչքի վաննաներ	100
Բովանդակություն	101



Պատ. խմբագիր Գ. Պողոսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ահանյան
Մրցագրիչ՝ Ա. Արդաքանյան

Գլավլիտի լիազոր՝ Բ—1019. Հրատ. № 4963.

Պատվեր 606. Տիրաժ 2000.

Թուղթ 62×94. Տպագր. 6½ մամ.

Մէկ. մամ. 25·600 նշան.

Հանձնված և արտադրության 28 հունիսի 1939 թ.

Առողջապահ և ապաղրության համար 11 հունվարի 1940 թ.




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037258

ԳԻԱԸ 50 Կ.
ԿԱԶՄԸ 40 Կ.



Доцент Б. МЕЛИК-МУСЯН
Заболевания переднего сектора глаза
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.